№ 104 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 5 ՅՈՒՆԻՍԻ

1918
ՔԱՌԱՍՈՒՆԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 5 ՅՈՒՆԻՍԻ № 104

Յունիսի 1-ից մինչև տարվայ վերջ
Գաւառում —28 ր., արտասահման—
Ամսական — 4 ր.
Առանձին համարները Թիֆլիսում
տուներում 35 կ., երկաթուղայ
կայարաններում 40 կոպ.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редак
Tiflis, Rédaction „
Соломоновская, 21.
Խմբագրատան հեռախօսի № 2-53

ТИФЛИСЪ
Винный подъемъ № 34.
Ованесу Капланяну

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—3
(բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւնն ընդունվում է ամէն լեզուով
Յայտարարութիւնների համար վճարում են՝ Կովկասում իւրաքանչիւր տողատեղին 50—30 կոպ., Կովկասից դուրս՝ 60—40 կոպ.
Հասցէն փոխելու համար պէտք ուղարկել թէ հին հասցէն և թէ 1 րուբլի։

ՄՇԱԿ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է (պայմանական) 1918 Թ. համար՝

Յունիսի 1-ից մինչև տարվայ վերջը		Վեց ամիսը	Երեք ամիսը	Ամսական
ԳԱՒԱՌՈՒՄ՝	28 ր.	24 ր.	12 ր.	4 ր.
ԱՐՏԱՍԱՀՄԱՆ՝	45 ր.	40 ր.	24 ր.	8 ր.

Թիֆլիսում ամսական 7 րուբլի։

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով։ Յայտարարութիւնների համար պէտք է վճարել՝ Կովկասում— առաջին երեսի վրա տողատեղին (պետիտ) 50 կ., վերջին երեսի վրա 30 կոպէկ։ Կովկասից դուրս՝ I երեսի վրա 60 կ., վերջին երեսի վրա 40 կոպէկ։ Մահազդերի (траурныя) համար՝ 15 րուբ.։ Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել հին և նոր հասցէն և 1 րուբլի։

Թիֆլիսի Քաղաքային Վարչութիւնը

համաձայն դումայի որոշման՝ յայտարարում է հետևեալ լրացուցիչ պարտաւորական որոշումը.

1) Արգելվում է վարձով տալ սենեակներ կամ բնակարաններ այն դէպքում, եթէ դրանք ռեկվիզիցիայի ենթարկված կամ թէ ռեկվիզիցիայի ենթարկելու համար ծանուցագիր է ստացված։

2) Արգելվում է վարձով տալ այն սենեակներն ու բնակարանները, որոնք Քաղ. Վարչութեան Բնակարանային Բաժանմունքի կողմից արդէն ցուցակագրված են։

3) Ներկայ որոշումը խախտողները կը պատժվեն 29 րդ յօդուածով։

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ
(Ի. Հ.) տա. 413 3—3

ԲԺՇԿԱՊԵՏ
Բ. ԴՕՆԽԻՆ
Նախկին երկար ժամանակեայ ասիստենտ Պարիզի և Վիեննայի համալսարանների աչքի հիւանդութիւնների կլինիկաների.
ընդունում է
Աչքի հիւանդութիւններ
ունեցողներին ցերեկվայ ժամը 10 ից մինչև 12 ը և երեկ. 4—7 ը. Միքայէլեան պր. 76 (Թիֆլիս.
տա. (տ. օ.) 378. 100—14

ԲԺԻՇԿ
Վ. ԱՐԾՐՈՒՆԻ
Մեկնեց ՊԵԱՏԻԳՕՐՍԿ
Կովկ. Հանքային Ջրերը,
որտեղ կը վերսկսի հիւանդների ընդունելութիւնը իր նախկին բնակարանում՝ Пятигорскъ, Верхній бульв. (Романовск. пр. № 5) д. кн. Гирей.
տա. (օ. մ.) 330 15—15

ԲԺԻՇԿ
Վ. ԽԱՉԱՏՐԵԱՆՑ
Ներքին և ջղային հիւանդութիւնների։
Հիւանդների համար անվճար, անալիզները կատարվում են ՁՐԻԱՊԷՍ։
Ընդունելութիւնը եր. ժ. 5—7
Հասցէ՝ Вознесенская ул. № 8.
տա. (չ. ու. կ.) 1314. 100—100

ԲԺԻՇԿ
Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ
Ներքին և երեխայոց, ստամոքսաղիքի, ստամոքսի և աղիքների հիւանդութիւններ, էլեկտրաբուժութիւն։
Ընդունելութիւնը ամեն օր՝ առաւ. 10—11 ժ. և երեկ. 5—7 ժ.։
Սոլոլակ, Բեհբութեան փող. № 38։ Հեռախօս 14—91։
տա. (չ. ու. կ.) 34. 100—43

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՆԿԱԽ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ

Հաշտութեան կնքմամբ և քաղաքական պայմանների ու վերջին դէպքերի դասաւորմամբ, երբ ստեղծվել է Վրաստանի անկախ հանրապետութիւն, Ադրբէջանի անկախ հանրապետութիւն, երբ հայկական գաւառների մի մասը կցվել է Թիւրքիային, իսկ մի փոքր մասը՝ մնացել մէջտեղը, թւում է, թէ անհրաժեշտութիւն կայ ստեղծել նոյնպէս հայկական անկախ իշխանութիւն, կամ, եթէ հետևելու լինենք վրացիներին և թուրքերին, «հայկական անկախ հանրապետութիւն»։ Մի քանի մարդեր այնքան առաջ են գնում նոյն իսկ, որ այդ հայկական անկախ իշխանութիւնը կնքել են «Արարատեան անկախ հանրապետութիւն» անունով, մոռանալով որ, աւաղ, Արարատը ամբողջովին կցված է Թիւրքիային։

Մեզ թւում է, որ հայկական անկախ իշխանութիւն կամ հանրապետութիւն ստեղծելու միտքը և՛ վաղաժամ է և՛ աննպատակայարմար, որքան և նա շոյիչ համարվի անհաւասարակշիռ մտքի տէր մարդկանց համար։ Անշուշտ, անտէր մնացած հայկական գաւառները կառավարելու համար պէտք է ունենալ ազգային մի իշխանութիւն կամ կառավարութիւն, բայց ստեղծել ներկայումս հայկական անկախ պետութիւն՝ մենք վնասակար ենք համարում հայ ազգի շահերի տեսակէտից և գտնում ենք, որ դա հեռաւոր ապագայի խնդիր և պերսպեկտիվ է։

Ի հարկէ, սկզբունքով, հայրենասիրական տեսակէտով խիստ ըղձալի է և տենչալի է հայկական կամ արարատեան անկախ թագաւորութիւնը, բայց ըէալ քաղաքականութեան, ժողովրդի բարօրութեան, զարգացման և ապահովութեան տեսակէտից՝ ներկայումս նա աննպատակայարմար է և կարող է աղէտաբեր լինել։

Մենք բնաւ չենք գտնվում այնպիսի պայմանների մէջ, որոնց մէջ գտնվում են վրացիները և մեր երկրի թուրքերը։ Վրաստանի և Ադրբէջանի անկախութիւնը նրանց համար գուցէ բերի երջանկութիւն, բայց մեզ համար Հայաստանի անկախութիւնը՝ ոչ։

Եւ այս շատ պարզ է։ Նախ, Հայաստան և Արարատ չունենք. մեզ տալիս են նախկին Հայաստանի մի փոքրիկ կտոր, մի չոր, մեծ մասը լեռնոտ. մենք չունենք ոչ միայն ծով, այլ և մի հատ մեծ գետ. մենք չունենք անտառ. մենք չունենք երկաթուղի. մենք նմանում ենք մի մարմնի, որից կտրել են մի ոտքը, մի ձեռքը, մի ականջը, հանել են մի աչքը, նոյն իսկ սրտի մի մասը և հոգու, ուղեղի մի մասը. մենք յօշոտված ենք և հաշմանդամ. բնական է, որ այդպիսի տձև, յօշոտված, արիւնաքամ մարմինը ապրել, զարգանալ և վերակենդանանալ չէ կարող, այլ քարշ կը տայ միայն մի անդամալոյծի եղկելի գոյութիւն։ Չունենալով ոչ անտառներ, ոչ հանքեր, ոչ գետեր, ոչ արգաւանդ դաշտեր, չունենալով արդիւնաբերութիւն, ինդուստրիա, վաճառականութիւն, մշակոյթ, մեր ժողովուրդը չէ կարող ապրել, այլ ստիպված պէտք է լինի պանդխտել օտար երկրները՝ իր ապրուստը ճարելու համար, մշակութիւն և առևտուր անելու համար։ Մենք չենք ունենալ հարկաւոր նիւթական միջոցները կառավարութիւն, զօրք, վարչութիւն պահելու համար։ Կտրված և անջատված լինելով Ռուսաստանից, մենք ալիւր չենք ստանայ. շրջապատված լինելով զօրեղ դրացիներով, մենք միշտ վտանգի ներքոյ կը լինենք։ Վերջապէս, Ռուսաստանը և բօլշևիկները դեռ ձեռք չեն վերցրել Անդրկովկասից և մեզ համարում են ապստամբներ. դեռ յայտնի չէ պատերազմի վախճանը, ելքը. դեռ անգլիացիները սպառնում են Պարսկաստանի վրայով արշաւել և նուաճել Անդրկովկասը։

Այս ամենը շատ լուրջ պատճառներ են, որոնք կը ստիպեն մեզ վերապահ լինել դէպի հայկական անկախ հանրապետութեան ծրագիրը և մտածել մի այլ՝ աւելի նպատակայարմար ելք գտնել։

Մենք կարծում ենք, որ հայ ժողովուրդը ներկայումս աւելի շահած կը լինի, եթէ մենք բանակցութիւններ վարենք մեր հարևան թուրքերի հետ և համաձայնութեան գանք նրանց հետ միանալ ու միասին կազմել Ադրբէջանի մի ընդհանուր աւտօնօմ երկիր, որի մէջ կը մտնեն Բաքուի, Գանձակի, Երևանի նահանգները ամբողջութեամբ, ինչպէս և Թիֆլիսի նահանգի Ղազախ գաւառը, բացի այն բոլոր վայրերից, որոնք գրաւվել են օսմանցիների ձեռքով։ Միայն՝ մենք հայերս և թուրքերս զօրեղ կը լինենք և կարող ենք ապագայ վտանգներին դիմադրել։ Ունենալով ընդհանուր կառավարութիւն, ընդհանուր զօրք, ընդհանուր ֆինանսական և մաքսային սիստեմ, մեզանից իւրաքանչիւրը կարող է ազգային-կուլտուրական աւտօնօմ կեանք ունենալ։

Սա մի միտք է, որ, անշուշտ, ծագել է շատերի գլխում և որին մենք արձագանք ենք տալիս և կը խնդրէինք ձեռնհաս անձանց արտայայտել իրանց կարծիքը. Մենք կարծում ենք, որ կարող կը լինենք թուրքերի հետ համաձայնութեան առողջ պայմաններ ստեղծել, բարի դրացիական յարաբերութիւններ մշակել։ Եթէ ապագայ փորձը ցոյց տայ, որ մենք միասին ապրել և կառավարվել չենք կարող, դարձեալ կարելի կը լինի բաժանվել, ինչպէս արին Շվեդիան և Նորվեգիան։

Միայն՝ այդ ծրագիրն իրագործելու համար անհրաժեշտ է մի պայման. դա այն է, որ հայկական ժամանակաւոր կառավարութիւնը կամ Ազգ. Խորհուրդը կազմված լինի այնպիսի տարրերից, որոնք հաւատ և վստահութիւն ներշնչեն թուրքերին և համոզեն նրանց, որ մեր քաղաքականութեան կուրսը փոխել ենք։ Դրա համար, պարզ և մեկին պէտք է ասել, թէ հարկաւոր է, որ գործի ղեկավար և գլուխ չը լինեն այլ ևս դաշնակցականները։ Այստեղ վիրաւորական ոչ մի բան չը կայ. լոկ հայրենասիրական պարտականութիւն է։ Այդ պահանջը դնում է այսօր և հասարակական կարծիքը, գրեթէ ամբողջ հայ ժողովուրդը։ Կեանքի և պատմութեան մէջ միշտ եղել են և լինում են րօպէներ, երբ ամենամեծ ույժերը, գործիչները ստիպված են տեսնում իրանց մի առ ժամանակ նսեմանալ, հեռանալ ասպարէզից և ասպարէզը թողնել ուրիշներին։

Այս առիթով ևս մենք կը խնդրէինք արտայայտվել։

Հ. Ա.

ՄԵՐ ՊԱՀԱՆՋԸ

Հայի սև ու սպիտակ, դառն ու քաղցր օրերին միշտ հանդիսատես, միշտ բաղդակից հսկայ, ալեզարդ Մասիս սարի ստորոտներում,—գեղատեսիլ և քաղցրահնչիւն, անվերջ դարեր չարքաշ բանուորի նման աշխատող, համեստ և մշտաջան Հրազդանի ափերին, որին մեր Մեծն Ալիշանը նուիրել է այս տողերը՝

«Հրազդա՜ն, գետակդ իմ հայրենի,
Հրազդա՛ն, ջրիկդ իմ անուշիկ...»,

Այսօր նոյնպէս հայութիւնը, երգելով ի մի «Ազատն Աստուածը», կռւամ-կոփւած է իր վիճակը, իր բաղդը, իր փառքը, իր ապագան։

Մեր ամենից իղձն ու փափագը, մեր ամենից յոյսը, հաւատը և ցանկութիւնը՝

«Արդեօք գալո՞ւ է մի օր՝ ժամանակ,
Տեսնել Մասիսի գլխին մի դրօշակ.
Եւ ամեն կողմից պանդուխտ հայ ազգը
Դիմել դէպ իւրեանց սիրուն հայրենիք...»

Կարծես թէ մօտ է իր իրականանալուն։ Անհուն ոգևորութիւն, վիթխարի շարժում՝ —«ազատ լինել Հայոց ազգին»... Ծերունի թէ հովիւ, արհեստաւոր թէ բանուոր, վաճառական թէ գործակատար, ուսուցիչ, ուսանող թէ աշակերտ, ոմանք ցնցոտիների մէջ, ոտաբոբիկ և գլխաբաց, ոմանք համեստ և մաքուր հագնված, թողած տուն, օջախ, վաթան, թողած սիրուն հարսնացու, նազելի կին, քաղցր զաւակներ, հարազատներ, ընկերներ և բարեկամներ, վառված ու զինված սուրբ հաւատով, ուժգին ձգտումով, խումբ-խումբ, շարան-շարան, անվերջ, անընդհատ, գիշեր և ցերեկ, շտապ, վազ, շնչասպառ, արագ առաջ ձգտելով, մի հոգի, մի մարմին դառած՝ գնում խմբվում են այն պատմական վայրերում, որտեղ տանջվել, չարչարվել, թունաւորվել է Ներսէս V.-ը, որտեղ Սմբատ Շահազիզն է ծնվել ու սնվել, մեծացել, ույժ և կորովութիւն առել «Լևոնի վիշտը» երգելու, որտեղ Խաչատուր Աբովեանցն է շարել իր անմահ «Վէրք Հայաստանին», երեսը միշտ դարձրած դէպ Մասիսի բարձունքը։

Չը կար և չէր լսվում և ոչ մէկի բերանից տրտունջ կամ ցաւ, անէծք, նախատինք կամ փոշմանութիւն, անվախ, աներկիւղ, ուրախ և զուարթ, ամենքը վազում, հրամայող ձայնով, աշխատում էին գրի անց կացնել իրանց անունները այն սրբազան գրքի մէջ, որով սկսվում է հայոց ազգի պատմութեան մի նոր դարագլուխ։

Կը շնորհէ՞ արդեօք նախախնամութիւնը մեզ և մեր հարևան ազգութեանց ույժ, կարողութիւն և կամք պահպանելու երկրի մէջ ներքին ցանկալի խաղաղութիւն՝ այդ ես չը գիտեմ և չեմ էլ ուզում ներկայ խառն օրերում այս կամ այն ենթադրութիւնը անել. բայց պարզ է և որոշ չափով հասկանալի ինձ համար այս մի խնդիրը, որ րօպէն, մոմենտը որքան ուշագրաւ, որքան թանկ, նոյնքան և խորհրդաւոր է, որ մարդիկ, որոնք անցած են այս մեծ գործի գլուխը, պարտաւոր են յանուն այն ամենի, ինչ որ սուրբ է մեզ համար, առանց այս կամ այն պատճառաբանութեան, լինել լուրջ, լինել շիտակ, լինել գործի և եռանդի տէր։ Պահանջվում է այդ մարդկանցից, որ նրանք բարձր կանգնած լինեն իրանց յատուկ բարձրութեան վրա, որ չը դարձնեն այս մեծ շարժումից «հայի գործ», լաւ յիշեն որ «отъ великаго до смѣшнаго» մի քայլ է միմիայն, որ համայն հայութիւնը, ամենուստեք, չռած աչքերով, ուժգին բաբախող սրտով, խէթ-խաբրիկ է սպասում Արարատեան դաշտից։ Պահանջվում է, որ մարդիկ, որոնց վրա ծանրանում է որոշ պատասխանատուութիւն, լինեն ուժի, կամ-

ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍՆԵՐԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵՆԷՆ ՎԵՐՋ

I

Պատերազմի հրատարակութենէն վերջ, միջազգային սոցիալիստական շարժումը, այն կերպով, որով տեսած էր մինչև 1914 օգոստոսը, կանգ առաւ։

Պատերազմի հրատարակումով, սոցիալիստները վրայէն իրենց ձեռքերը եղբայրական անկեղծութեամբ իրար երկնցնող զանազան ազգերու բանուորութիւնները ետ քաշեցին իրենց ձեռքերը, արիւնոտ ձեռքի մը հանդիպելու սարսուռով։

Շատերը այդ նահանջին մէջ տեսան [illegible] մը, դաւաճանութիւն մը և հռչակեցին միջազգայնականի սնանկութիւնը և ընկերվարական գաղափարի տապալումը։ Երևոյթները գոնէ այդպէս ցոյց կուտային, սակայն անոնք երևոյթներ և պատմական անհրաժեշտութիւններ էին որոշ ժամանակի մը տևողութեամբ։ Ճիշդ է, բանուորական միջազգայնականը քանդուեցաւ, սակայն դեռ այդ չէր նշանակեր, թէ այդ գաղափարը երբևէ ապագայ իրականութիւն՝ մեռաւ։ Բանուորական միջազգայնականը իր պատմութեան ընթացքին անցեր է այդպիսի մի քանի քայքայումներ և վերականգնումներ և այդ հեռանկարէ աւելի կենսունակութիւն և ոյժ առեր է իրեն։

Եթէ այդ օրերուն զանազան երկիրներու պրոլետարիատը չկրցաւ իր վրայ դրուած յոյսերը իրականացնել, այդ միմիայն այն պատճառով, որ դեռ չէ ստեղծուեր տնտեսական այն պայմանը, որ պրոլետարիատը հասցնէր գիտակցական աստիճանի մը, որով կարող ըլլար արգիլել արիւնախանձ այն սպանդը, որ պատմութեան մէջ համաշխարհային պատերազմ անունով պիտի մնայ։

Շատ կանխապարէն անշուշտ անոնք որ կը հռչակեն ինթէրնասիոնալի սնանկութիւնը։ Ճիշդ է, 1914 թուին ինթէրնասիոնալ մը սնանկացաւ, բայց այդ միջազգային պրոլետարիատի կատարեալ պատմական մեծ միսիայի գաղափարը չէր։ Ոևէ հիմք չը կայ այդպիսի կարծիք մը հիմնաւորելու համար։

Ներկայ յօդուածով կուզեմ համառօտակի թուել այն փորձերը, որոնք տեղի ունեցան պատերազմի բռնկումէն վերջ, վերականգնելու համար ինթէրնասիոնալը։ Այդ փորձերու մեծ մասը անցաւ անօգուտ և կամ շատ աննշան հետևանքներով, որովհետև կամ կը բխէին պրոլետարիատի խորթ միջավայրերէ և կամ անժամանակ էին, որովհետև զանազան երկիրներու բանուորութիւնը դեռ պատերազմի առաջին օրերու ստեղծած արտակարգ պայմաններու և զգացումներու ազդեցութեան տակ էր։

Առաջին ժողովը միջազգային հողի վրայ, պատերազմի հրատարակութենէն վերջ, եղաւ իտալական Լուգանօ փոքր քաղաքին մէջ 27 սեպտ. 1914-ին։ Կազմակերպողն էր այն ատեն չէզոք եղող Իտալիոյ միացեալ ընկերվարական կուսակցութիւնը, որու կողմէ ներկայ էին Արմուցցի, Լազարի, Մօտիլյանի, Մորկարի, Տուրաթի, Թրեւաթի և տիկին Պալապանօվ։ Իտալական պրոլետարիատի ներկայացուցիչներէն զատ ժողովին կը մասնակցէին զուիցերիական ընկերվարականներ Գրէյլիխ, Ալպեսթիէ, Ֆէյր, Գրիմ *), Շէնթել, Պֆլիւգեր, Հէն և Ռիմաթիէ։ Այդ համախորհրդին մէջ քննուելով պատերազմի պատճառները և անոր շարունակութիւնը արգիլելու միջոցները, հրատարակուեցաւ կոչ մը, որու կարևոր մասն է հետևեալը.

«Գերման և աւստրիացի բուրժուաները իրաւունք չունին պատերազմը արդարացնել ազգին քաղաքական զարգացումով, քանի որ այդ երկիրներու կառավարութիւնները միշտ իրենք են եղած, որ իրենց ժողովրդին ազգային քաղաքակրթութիւնը ճզմած են։

«Նոյնպէս Ֆրանսացի և անգլիացի բուրժուաները իրաւունք չունին խօսելու իրենց երկիրը պրուսական իմպերիալիզմի դէմ պաշտպանելու մասին, որովհետև խոչընդոտ եղած են քաղաքակրթութեան զարգացման՝ ռուսական ցարիզմին հետ դաշնակցելով»։

Երկրորդ միջազգային ընկերվարական կոնֆերանսը եղաւ Կոպէնհագի մէջ, 17 և 18 յունվար 1915-ին, որու կը մասնակցէին միայն չէզոք երկիրներու ընկերվարական կազմակերպութիւններու ներկայացուցիչները, մասնաւորաբար սկանդինաւեան երկիրները, որովհետև Սպանիան, Զուիցերիան, Իտալիան, բալկանեան երկիրները և Միացեալ Պետութիւնները պատգամաւոր չէին ուղարկած։ Համագումարը կը խմբագրէ բանաձև մը և կոչ մը ուղղուած կռուող երկիրներուն.

«... Համագումարը կը հաստատէ, որ կապիտալիզմը իր իմպերիալիստական ձևով և սպառազինումներու յարատև աճումով, ծաւալելու քաղաքականութեան մը անբարեխիղճ գործադրումով և անպատասխանատու դաղտնի դիւանագիտութեան մը ակտովը աշխարհը հասցուց արդի աղէտին, որ սոց.-դեմոկրատիայի կողմէ նախատեսուած և յայտարարուած էր։

«Այն րօպէին, երբ ամբողջ մարդկութիւնը լեցուած է այս պատերազմին բազմապատկած չարիքներու և աւերածութիւններու սարսափովը, կոնֆերանսը կուզէ արտայայտել խաղաղութեան այն ուժեղ և անյողդողդ կամքը, որ գոյութիւն ունի կոնֆերանսում ներկայացուած ժողովուրդներու մէջ։

«Կոնֆերանսը կը նկատէ, որ իր հաւաքումին գլխաւոր նպատակն է ամրացնել այն հանրային կամքը, որ անշուշտ բոլոր երկիրներու մէջ կը պահանջէ տևական խաղաղութեամբ մը պատերազմի վերջ։

«Ուստի այս նպատակով կը դառնայ դէպի բոլոր սօցիալ դեմօկրատ բանուորները, և մասնաւորաբար դէպի անոնց որ կը պատկանին կռուող երկիրներուն, կոչելով միջազգային համերաշխութեան սկզբունքներուն և արդարութեան զգացումներուն վրայ, յայտարարած բոլոր միջազգային կոնկրեսներէն։

Արմէն

(Վերջը միւս անգամ)

---

*) Այս այն Գրիմն է, որ մեծ դեր ունեցաւ Ցիմմերվալդի և Կինտալի խորհրդաժողովներու կազմակերպութեան մէջ և որ ռուսական յեղափոխութենէն վերջ եկաւ Ռուսաստան իբր խաղաղութեան հրեշտակ, բայց յետոյ երևան եկաւ, որ նա պրովօկատոր է և յարաբերութիւն ունի Վիլհելմի կառավարութեան հետ, կաշխատի ի նպաստ գերման [illegible] կազմակերպութեան։ Այդ կեղծ սօցիալիստը մեծ պատիւ ունէր բօլշևիկական շրջաններում, բայց իր մասին եղած մերկացումէն յետոյ՝ առօք փառօք վտարուեցաւ Ռուսաստանէն։

Թիֆլիսի Ամառ. Ժողովարանի
ԹԱՏՐՈՆ
Այսօր, չորեքշաբթի, յունիսի 5-ին
Յ. ՈՍԿԱՆԵԱՆԻ
ՕՊԵՐԷՏԱՅԻՆ ԴԵՐԱՍԱՆԱԿԱՆ ԽՈՒՄԲԸ
Կը ներկայացնէ
Ըստ աշուղ Ջիվանիի
ԱՇՈՒՂ ՂԱՐԻԲ
Երաժշտական պիէս 5 արար. 7 պատկ.
փոխ. Ոսկանեանի
Սանամի դերը կը կատարէ
տիկ. ԳԱՐԱԳԱՇ-ԹՈՒՄԱՆԵԱՆ
Աշուղ Ղարիբի » » պ. ՇԱՐԱ-ՏԱԼԵԱՆ
Խոջա Սահակի » » պ. ԱԲԳԱՐԵԱՆ
Մասնակցում է ամբողջ խումբը
Բալէտ՝ մասնակցութեամբ և ղեկավարութ.
Արքունական թատրոնի պարող պ. ԱԼԲԵՐՏԻ
Ասիական երաժշտախումբը ղեկ. ՑՈՂԱԿԻ
Սկիզբն է երեկ. ժամը 8-ին
Ռեժիսոր՝ ՈՍԿԱՆԵԱՆ
ԱԶԴ.— Շաբաթ «Ասլի Քեարամ», կիրակի
առ. «Անմեղ Զօրի». 424 1—1

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

(ԶՈՒԲԱԼՕՎԻ ԱՆՈՒԱՆ)
Այսօր, չորեքշաբթի,
յունիսի 5-ին (ն. տ.),
ՀԱՅԿԱԿԱՆ ԴՐԱՄԱՏԻԿ
ԽՄԲԱԿՑՈՒԹԻՒՆԸ
ՍԵԶՕՆԻ ՓԱԿՄԱՆ ԱՌԹԻՒ
ԿԸ ՏԱՅ ՎԵՐՋԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ
Կը ներկայացնէ Գ. ՋՈՒԲԱՐԻ
ՍԱՆԴՈՒԽՏ
Պատմական դրամա 4 արար. 7 պատկեր.
Մասնակցում է ամբողջ խումբը
Սկիզբն է երեկոյեան ճիշդ ժամը 7½-ին
Ռեժիսոր՝ Սեւեան
Օգնական-ռեժիսոր՝ Լազարեան
Տոմսերի գները 30-ից մինչև 1 ր. 40 կ.
Վարչութեան հերթապահ անդամներ՝
Մ. Խարզուլեան, Լ. Աղաբաբեան
1—1

ցի, փոքր և խոշոր ազգ, որ ամեն մի գործում թագաւորէ կարգ, կանոն, պատասխանատուութիւն և երկաթէ դիսցիպլինա, որ չը լինի փոքրոգութիւն, վախկոտութիւն, որ մեծը՝ հրամանատարը, կարգադրողը լինի իրօք մեծ՝ կանգնած իր կոչման և բարձրութեան վրա, իսկ փոքրը՝ ստորադրեալը հլու հպատակութեամբ լսող և կատարող։ Զօրքը համարվում է զօրք և իր նպատակին ծառայող միմիայն այն դէպքում, երբ նա ընդունակ է խիստ և անշեղ կերպով ենթարկվելու զինուորական կարգ ու կանոնին և այն դիսցիպլինային, առանց որի զօրքը զօրք չէ, այլ խաժամուժ, թիւրիմացութիւն, ցաւ ու պատուհաս։

Այժմ ուրեմն, եթէ թանգ է մեզ համար ազգի գոյութեան խնդիրը, եթէ ներկայի մեր ձեռներէցութիւնը սոսկ մի ձևականութիւն չէ, այլ անհրաժեշտ պահանջ ստեղծված պայմանների մէջ, եթէ մենք իրօք ընդունակ ենք ըստ արժանւոյն գնահատելու մեր համայնական այն զգացումը, որ տիրում է ներկայ մոմենտում ազգի բոլոր խաւերի մէջ և եթէ մենք նախանձախնդիր ենք մեր զարգացման, մեր առաջադիմութեան, մեր բարգաւաճման, հարկաւոր է, պահանջվում է խիստ կերպով, հրամայող ձայնով, որ այն հաստատութիւնները և այն մարդիկ, որոնք անցած են գործի գլուխ, լինեն անպայման իրանց դերի, իրանց պաշտօնի մէջ։ Պահանջվում է, որ ամենքը, ընդհանուր հրամանատարից սկսած մինչև վերջին զինուորը մի առ ժամանակ, այս վերին աստիճանի փափուկ և պատասխանատու գործում մոռանան իսպառ իրանց գոյութիւնը և կեանքի բարիքները, նուիրվեն գործին իրանց հոգու և սրտի ամբողջ կարողութեամբ, աշխատեն անվերջ, անսահման, աշխատեն օր ու գիշեր, ամբողջ քսան և չորս ժամ։ Հակառակ դէպքում, այլ ճանապարհ, այլ ուղղութիւն, այլ ընթացք, այլ տակտիկա ընդունելով՝ մենք ոչ մի մխիթարական հետևանքի չենք հասնի և, որ ցաւալին է, կը կործանվենք ընդ միշտ մեր նորեկ շինութեան փլատակների տակ։ «Non multa, sed multum».

Յ. Ջանումեան

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ.

ՀԱՇՏՈՒԹԻՒՆ ՎՐԱՍՏԱՆԻ ԵՒ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՄԻՋԵՒ

Յունիսի 3-ի երեկոյեան Վրաստանի և Թիւրքիայի միջև հաշտութիւնը կնքված է։ Հաշտութեան պայմանագրի տեքստը ռադիօյով յունիսի 3-ի երեկոյեան ստացան գերմ. դեսպանատունը և վրաց կառավարութիւնը։

Մանրամասնութիւնների մասին վաղը։

ՂԱՐԱՔԻԼԻՍԱՅԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԻ ՄԱՍԻՆ

Երէկ Սանահնից Թիֆլիս հասան 10 հոգի հայեր, որոնք երեք օր ոտքով ճանապարհ են կտրել՝ ցերեկները թագնվելով, գիշերները քայլելով։

Նրանցից մէկը, Ղարաքիլիսայից Սանահին եկած փախստականների բերանից, մեզ պատմեց հետևեալը Ղարաքիլիսայի մեծ ճակատամարտի մասին։

Ղարաքիլիսեցիք և նրա շրջակայ գիւղացիները, իմանալով որ օսմանցիները Համամլուից կամենում են գրոհ տալ դէպի Ղարաքիլիսա, բոլորը մի մարդու նման ոտքի են կանգնում և որոշում են՝ մեռնել և անձնատուր չը լինել։

Փոքրաթիւ հայ զինուորները, միացած գիւղացիների հետ, ամեն միջոց ձեռք են առնում թշնամու առաջը կտրելու։ Զօրամասերի մէջ են մտնում նոյն իսկ ծեր, հասակաւոր մարդիկ ու պատանիներ։

Տրամադրութիւնը այնքան բարձր է լինում, որ մարտիկները երգով են գնում դէպի կռւի դաշտը։

Մերոնք ունենում են միայն վեց գնդացիր և զինված են լինում հրացաններով։

Արջուտ կիսակայարանի մօտ սկսվում է կողմերի ընդհարումը։

Թիւրքերը բռնած են լինում մի քանի բարձունքներ, հայերը բռնում են հակառակ բլուրների գագաթները։

Թիւրքերը ունենում են թնդանօթներ և 10,000-ից աւելի ոյժ, հայերի ոյժը հազիւ հասնում է 5—6000-ի։

Թեժ ընդհատումներով կռիւը տևում է չորս օր ու գիշեր։

Մեր զօրամասերը, մեր գիւղացիները կռւի մէջ են նետվում անվախ, համարձակ, առանձնայատուկ ոգով։

Թիւրքերը արձակում են թնդանօթներից, մերոնք պատասխանում են գնդակացիրներից, և պարտիզանական յարձակումներով ցրում են թշնամու ուշադրութիւնը մի տեղ կենտրոնանալուց։

Որքան մերոնք լինում են յամառ, թիւրքերը այնքան անդրդուելի են ցոյց տալիս իրանց։ Նրանք հետզհետէ ստանում են նորանոր ոյժեր, իսկ մերոնք առանց օգնութեան և նոյն իսկ առանց սննդի մնում են իրանց դիրքերում։

Չորս օրվայ տաք կռիւը վերջանում է նրանով, որ մերոնք, սպառելով իրանց ռազմամթերքը, ստիպված նահանջում են դէպի Ղարաքիլիսա, իսկ այնտեղից դէպի Համզաչիման։ Մերոնց նահանջից յետոյ, թիւրքերը առաջանալով մտնում են հայկական Դարբազ, Բեզովդալ, Ղշլաղ գիւղերը և Ղարաքիլիսա։

Սխալ են թերթերում տպված այն տեղեկութիւնները, թէ մերոնք զոհ են տուել 1500 հոգի, իսկ գերի 1000. Դրանից այն տպաւորութիւնն է ստացվում, որ ամբողջապէս զոհվել և գերվել են մեր կռւողները։ Բանն այն է, որ այդ զոհերի և գերվածների մեծ մասը փախստականներ են։

Միևնոյն մարդու ասելով, Ալէքսանդրապոլում թիւրքերն իրանց կարգն են պահում. վերջին օրերս գողութեան համար քաղաքում թիւրքերը կախել են 8 թիւրք, 8 հայ։

Տարածվում է այն լուրը, որ երկաթուղ. մեքենավար Վինոգրադովը խորտակել է երկու գնացք, թիւրքական զօրքերով։ Գնացքները խորտակվել են այնպիսի տեղ, ուր գծի երկու կողմը ձորեր են։ Ոչ ոք չի ազատվել խորտակումից։ Ինքը Վինոգրադովը նոյնպէս մեռել է։

Այս պատմել է Ալէքսանդրապոլից փախած մի ռուս մեքենավար։

Պատմողը վառ գոյներով է նկարագրում մի հայ յայտնի հերոսի արարքները Լոռու շրջանում, ուր ամբողջ ազգաբնակութիւնը տրտնջում է նրա դէմ։

ԳԱՆՁԱԿՈՒՄ

«Т. Л.»-ին գրում են.

Մայիսի 29 ին մի քանի ժամ հայ և մուսուլման թաղերի միջև տեղի ունէր հրաձգութիւն։

Երեկոյեան դէմ հրաձգութիւնը դադարեց։

Դրա պատճառը պարզելու համար հայկական թաղը գնացին [illegible] Նազիմ փաշան և Նուրի փաշան։

Մայիսի 30-ին Նուրի փաշայի հրամանով մուսուլմանական կորպուսի մի բատարեա ուղարկվեց Եւլախ՝ Աղդամ գնալու համար։ Նա իր հետ տարաւ 4 թնդանօթ, որ անհրաժեշտ է այն կողմը շարժվող թիւրք զինուորներին։ Կորպուսի շտաբի հրամանի համաձայն՝ այդ թնդանօթները ղրկելուց առաջ ռուս օֆիցերների ձեռքով լաւ մաքրվեցին և կարգի բերվեցին։

Գեներալ Շիխլինսկին՝ մուսուլմ. կորպուսի հրամանատարը՝ ստացել է փաշա տիտղոս և համաձայն օսմանցիների սովորութեան հիմա կոչվում է Ալի-աղա փաշա։

Գանձակում սպասվում է օսմանցիների՝ թւով երրորդ գեներալը—Թալեաթ փաշան, որ Թաւրիզից, Աղդամի վրայով, գալիս է Եւլախ։ Ինչպէս Նազիմ և Նուրի փաշաները, այնպէս և Թալեաթ փաշան Կ. Պոլսից դուրս է եկել երկու ամիս առաջ։

Ըստ երևոյթին Գանձակին վիճակված է լինել ապագայ Ատրպատականի մայրաքաղաքը, իսկ մինչ այդ նա հանդիսանում է օսմանցիների ազդեցութեան վայրը, ուր դիտաւորութիւններ են մշակվում Բագուն նուաճելու։

Գանձակում այժմ կատարվում են խոշոր աշխատանքներ Գանձակի նահանգը և նրան կից Բագուի գաւառը նուաճելու։

Մեծ հանդիսով, երաժշտութեամբ և պատւով ընդունվեց Կ. Պոլսից եկած երկրորդ հիւրը՝ Նուրի փաշան (Էնվէրի եղբայրը)։

Արդէն մի քանի օր է՝ օսմանցի գեներալներ Նուրի և Նազիմ փաշաները իրանց շտաբի հետ կատարում են ջերմ գործնական աշխատանքներ, սպասելով եկող զօրքերին։ Նրանք իրանց իսկական նպատակի մասին չեն հաղորդել տեղական մուսուլմաններին ազդեցիկ ղեկավարներին։ Իսկ հարկ եղած դէպքում փաշաները խորհրդաւոր բացատրում են. «Եկել ենք իբրև հիւրեր...»։

Նրանք երկուսն էլ միշտ ընդգծում են, որ Թիւրքիան ցանկանում է Անդրկովկասում լիակատար խաղաղութեան մէջ ապրել հայերի հետ և հայկ. կոմիտէի ներկայացուցիչներին, որ կայարանում դիմաւորեցին Նուրի փաշային, վերջինս խոստացաւ ամեն միջոց ձեռք առնել քաղաքի հայ և մուսուլման թաղերի բարի դրացիական յարաբերութիւնները բարելաւելու համար։

Հէնց Նուրի փաշայի գալուց մի քանի օր առաջ ազգ. կոմիտէների ներկայացուցիչները մշակել են համաձայնութեան պայմանագիր, որը արդէն պէտք է կեանք մտցվէր։

Բայց այդ պայմանագիրը այնուամենայնիւ մնաց թղթի վրա և քաղաքի կեանքի կենցաղական պայմանները ոչինչով չեն փոխվել։ Առաջվայ պէս ոչ մի մուսուլման և ոչ մի հայ չի համարձակվում անցնել կամուրջից։

—

Գանձակից դէպի արևելք տանող երկաթուղին վերջին ժամանակներս պահպանվում է օսմանցի ասկերների ձեռքով։ Այժմ նկատվում է փոքր ինչ կարգ ու կանոն։ Կողոպուտները գրեթէ դադարել են։ Գնացքների մէջ կարելի է տեսնել և ռուս կանանց։

Երկաթուղին այն տպաւորութիւնն է թողնում, թէ նա արդէն գրաւված է օսմանցիներից։ Կայարանների գլխին ծածանվում են օսմանեան դրօշակներ։

ՆՈՐԱԳՈՅՆ ԼՈՒՐԵՐ

✠ Թիւրքաց կառավարութիւնը թոյլ է տուել վրաց կառավարութեանը՝ մօտիկ ապագայում բանալ Բաթումում անդրկովկասեան բանկի բաժանմունք։

✠ Բաթումից յունիսի 4-ին արտակարգ գնացքով Թիֆլիս եկաւ վրաց հաշտարար պատուիրակութեան անդամ Գ. Ռցխիլաձէն, որ զեկուցում է տուել վրաց ազգային խորհրդում հաշտութեան բանակցութիւնների ընթացքի մասին։

✠ Հաղորդում են, թէ մինչև յունիսի 3-ի ժ. 2-ը բոլոր կովկասեան զօրաճակատների վրա հանգիստ էր։ Հաշտութեան բանակցութիւնները շարունակվում են։

✠ Վրաց արտաքին գործերի մինիստրի օգնական Զ. Աւալովը ուղարկվել է Բեռլին հանրապետութեան կառավարութեան գործերով։

✠ Լէնքորանի գաւառում նորից սկսվել են անկարգութիւններ։ Զգացւում ուտելիքի մեծ պակասութիւն է։

✠ Ժողովրդական կոմիսարների խորհուրդը պահանջել է Գերմանիայից յայտնել որոշակի, թէ թոյլատրվում է արդեօք ռուսական Սև ծովի նաւատորմին վերադառնալ Սեվաստոպոլ, թէ Գերմանիան կամենում է օգտվել մեր նաւերից։ Միաժամանակ խորհուրդը պահանջել է անպայման ռուսների ձեռքում թողնել Բատայսկը։ Ժող. կոմ. խորհրդի այդ պահանջները կոմս Միրբախը ուղարկել է Բեռլին։

✠ Աւելի ու աւելի յամառ կերպով է խօսվում այն մասին, թէ Քիւրդամիր կայարանում կատաղի կռիւ է ռուսական զօրքերի և թուրք-վրացական զօրքերի մէջ։

ՊԱՏԵՐԱԶՄ

(Անդրկ. Հեռ. Գործ.)

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԲԵՌԼԻՆ, 3 յունիսի. — Կրօնպրինց Ռուպրեխտի զօրաբանակ. Ժամանակ առ ժամանակ տաք թնդանօթաձգութիւն է. Թշնամու յամառ յարձակումները Լէյէլից արևմուտք և Լիսից հիւսիս մենք վանեցինք։

Գերմանական կրօնպրինցի զօրաբանակ։ Մեր արշաւանքի ժամանակ ջարդված ֆրանսիական և անգլիական զօրաբանակներին փոխարինելու համար կռւի տեղը եկան ֆրանսիական նոր զօրամասեր հեռաւոր զօրաճակատներից։ Նրանք ապարդիւն տեղը փորձեցին իրանց դիրքերը պահել Էնեից հիւսիս։ Մենք ետ շպրտեցինք կատաղի խրամատային կռւից յետոյ Մուլէնսու-Տուվան-Խրիստոֆ-Վէնզը զօրագծի վրա։

Սուասօնից հարաւ-արևմուտք մենք վերցրինք Շաւուդունը։ Մենք կռւով անցանք Սավիէրի դաշտավայրը և հասանք Վիլլէր-Սօտերեխս անտառների արևելեան ծայրին։

Ուրսից հարաւ թշնամին գործում էր ուժեղ հակայարձակումներ։ Բոլոր յարձակումները ետ մղվեցին կորուստներով։

Մենք գրաւեցինք Շատօ-Տիէրրից արևմուտք ընկած լեռնադաշտերը։

Մառնայի վրա, Մառնայի և Ռէյմսի միջև, դրութիւնը նախկինն է։ Դէպի կռւի դաշտը տանող երկաթուղագծերը լիքն են ապրանքներով, որոնք ենթարկվեցին մեր ռմբակոծութեան։

Մենք խլեցինք թշնամու 31 աէրոպլան։

Սուասօնից հարաւ-արևմուտք մենք հասանք նոր աջողութիւնների։ Ուրսի երկու կողմերում ֆրանսիական հակայարձակումները վանվեցին։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(Անդր. Հեռ. Գործ.)

ՎՐԱՑ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՄԷՋ

ԹԻՖԼԻՍ, 3 մայիսի.—Սուրամի քաղաքային ինքնավարութիւնը, Քութայիսի քաղաքային դուման և Շորապանի շրջանի սոց.-դեմ. կուսակցութեան ընդհանուր ժողովը յայտնել են, որ ամեն միջոցներով կը պաշտպանեն վրացական հանրապետութիւնը արտաքին և ներքին թշնամիներից։

Զինուորական մինիստրը կարգադրել է Քութայիս. [illegible] Ռիօն կայարանում կախել ազգային դրօշակ։

Պարենաւորման գործի կանոնաւորման համար նշանակված է առանձին լիազօր՝ Վլադիկավկազ մեկնելու համար։

Կազմակերպվող հաստատութիւնների, ազգային զօրամասերի, զինուորական, երկաթուղիների և կապալառուների պահանջներին բաւարարութիւն տալու համար հաստատված է մասնաժողով արքունական պալատի կառավարչի նախագահութեամբ, որին [illegible] մեղական ազգային խորհուրդների ներկայացուցիչներին։

Կովկասեան լեռնականների շահերի պաշտպանութիւնը իր վրա է վերցրել երկրային լեռնական խորհուրդը, մինչև պաշտօնական դիւանագիտական կապ հաստատվելը Վրաստանի և Լեռնայի կառավարութիւնների միջև։

Ժող. լուսաւորութեան մինիստր Լասխիշվիլիի նախագահութեամբ կայացաւ խորհրդակցութիւն Վրաստանում ժողովրդական կրթութիւնը վերակազմելու համար։ Վճռված է վերացնել կովկասեան ուսումնարանական շրջանի վարչութեան կոմիսարիատը և հաստատել ժամանակաւոր լիկվիդացիոն մասնաժողով։

Քութայիսից հեռագրում են, թէ արտակարգ ֆինանսական մասնաժողովը, որի մէջ մտնում են կառավարական հաստատութիւնների, քաղաքային դումայի և յեղափոխական կազմակերպութիւնների ներկայացուցիչները, որոշեց ժողովել Քութայիսի նահանգում, իբրև սովորական փոխառութիւն, 10 միլիօն ռուբլի։ Որոշված է առաջարկել նահանգական կոմիսարին անմիջապէս գործադրել այս որոշումը։

ՊԵՏԱԿԱՆ ՅԵՂԱՇՐՋՈՒՄ ՈՒԿՐԱՅՆԱՅՈՒՄ

ՓՈՔՐ ՌԱԴԱՅԻ ՎԵՐՋԻՆ ՆԻՍՏԸ

Ռադայի նիստը 27 ապրիլի

Սոց.-դեմ. Ռաֆէսի ճառից յետոյ, որ խօսում էր մենշևիկների և Բունդի կողմից և առաջարկում էր Ուկրայնայի հիմնադիր ժողովի ընտրութիւններ նշանակել յունիսի 1—2—3 ին, ժողովը, ընդունելով այդ առաջարկութիւնը, անցնում է ուկրայնական զինուորների զինաթափ արվելու հարցին։

Զինուորական մինիստր Ժուկովսկին, պատասխանելով հարցապնդումին, ասաց որ գերմանական հրամանատարութիւնը յանկարծակի կերպով գիշերը շրջապատեց զօրանոցները և զինաթափ արեց։

Զօրանոցներում դրված են պահակներ գերմանական զինուորներով և գնդացիրներով։

Զինուորական մինիստրից յետոյ մի ընդարձակ ճառով հանդէս եկաւ մինիստր-նախագահ Գոլուբովիչը։

Նա խօսեց ապրիլի 26 ին Կիևում պատերին փակցված Էյխհօրնի հրամանի մասին։

Մինիստր-նախագահը գտնում է, որ տեղական գերմանական հրամանատարութիւնը խախտել է գերմանացոց հետ կապված համաձայնութիւնը։

Տեղական գերմանական իշխանութիւնների քաղաքականութիւնը չէ համապատասխանում գերմանական կենտրոնական կառավարութեան հայեացքներին, որը կողմնակից է Ուկրայնայի հետ ունեցած առևտրական խաղաղ յարաբերութիւնների ամբացման։

Ուկրայնան արդէն տուել է Գերմանիային և Աւստրիային աւելի քան երեք միլիօն պուդ հաց։

Ռայխստագը իր վերջին նիստում պախարակեց Ուկրայնայի գերմանական իշխանութիւնների քաղաքականութիւնը։

Իսկ գերման հրամանատարութեան անպատասխանատու ներկայացուցիչները շարունակում են իրանց քաղաքականութիւնը։

Մինիստր-նախագահը ենթադրում է, որ ստեղծված դրութիւնից դուրս գալու ելք գտնելու համար կարելի է գուցէ դիմում անել գերմանական կառավարութեանը առանձին նոտայով, պահանջելով ետ կանչել տեղական անպատասխանատու գերման իշխանաւորներին։

Իր հաղորդակցութիւնը Գոլուբովիչը վերջացնում է դահլիճի մեռելային լռութեան մէջ։

Ապրիլի 28 ի նիստը

Հանդէս են գալիս մի շարք ճառախօսներ։

Ապրանքափոխութեան պետական յանձնաժողովի նախագահ Պորշը հաղորդում է, որ պրօֆես. միութիւնների կենտրոնական բիւրօյում ստացված է նոր հրաման, որով յայտնվում է, որ մայիսի 1-ը տօնելու թոյլտուութիւնը ներքին գործերի նախագահը պէտք է ստանայ գեներալ Էյխհօրնից։ Ճառախօսը ընդգծում է, որ հանգիստ աշխատելու հնարաւորութեան բացակայութեամբ չը կայ երաշխիք, որ Ուկրայնան կարող է կատարել իր պարտականութիւնները ըստ առևտրական դաշնագրերի։

Մի մեծ ճառով հանդէս եկաւ Վինիչենկոն

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱԽԱԼՔԱԼԱՔԻ ԴՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Մայիսի 20—21-ին Կարզախ գիւղի շրջանում բռնկվում է հայ-թուրքական ուժեղ կռիւ, որի ժամանակ թուրքերի գերազանց ոյժերի ճնշման տակ՝ հայերը յետ են նահանջում դէպի Ախալքալաք։ Այդ ժամանակ Կարզախից հեռախօսով տեղեկացնում են Ախալքալաքի զօրքի գնդապետին և Ազգային Խորհրդին, որ իրանք այլ ևս անկարող են դիմադրել թուրքերին և, փամփուշտ չունենալու պատճառով, ստիպված են դիրքերը թողնելու։

Գնդապետը, ի նկատի ունենալով որ թուրքերը Ախալքալաք գալով ոչ ոքի չեն խնայի, ազգային խորհրդի հետ միասին կարգադրում է ազգաբնակութեանը վերցնել մի քանի օրվայ պաշար և հեռանալ քաղաքից դէպի Բակուրեանի։ Չը նայած որ այդ օրը տեղում էր յորդ անձրև, այնուամենայնիւ գաղթականութիւնը ուշադրութիւն չը դարձրեց օրվայ վատութեան վրա ու լացով բռնեց գաղթի ճամբան։ Գաղթականներին առաջնորդում էր Ախալքալաքի զօրամասի Ներսէս վարդապետը, որ ամեն կերպ աշխատում էր ճանապարհին գաղթականներին յոյս տալ։

Մէկ օրից յետոյ գաղթականութիւնը կանգ առաւ Ղազօ գիւղում ([illegible])։ Ղազօցիները դուրս եկան զինված, չը թողեցին գաղթականներին առաջ շարժվել, և ամբողջ հինգ օր գաղթականները գիշերեցին բացօթեայ։ Ղազօցիները ասում էին, թէ «մենք ոչ ազգային խորհուրդ գիտենք, և ոչ էլ գնդապետ. մենք գիւղացիներս և ազգային խորհուրդ ենք և գնդապետ. մենք ոչ մի իշխանութիւն չենք ճանաչում, կամ ետ դարձէք կամ այստեղ մնացէք»։ Մի խօսքով անտանելի կոպիտ վերաբերմունք էին ցոյց տալիս գաղթականներին։ Միևնոյն ժամանակ սպառնում էին գնդակահարել առաջ շարժվողներին։ Գաղթականութիւնը, տեսնելով որ ոչ մի հնարաւորութիւն չը կայ առաջ անցնելու գիւղացի գաղթականներից, մեծ մասը ետ է դառնում։ Մի քանի օրից յետոյ ետ են դառնում նաև քաղաքացիներից մի քանի տղամարդիկ, տեղեկանալու թէ ինչպէս է քաղաքի դրութիւնը, որովհետև այդ ժամանակ հաստատ տեղեկութիւն կար, որ թուրքերը Կարզախ գիւղը գրաւելուց յետոյ՝ այլ ևս առաջ չեն շարժվում։ Նոյն օրը քաղաքից վերադառնում են մի քանի հոգի և պատմում են, որ ամբողջ քաղաքը թալանված է հայ գիւղացիներից, թալանված է մինչև անգամ քաղաքի ս. Խաչ եկեղեցին։

Այնպէս որ ներկայումս անտանելի դրութեան մէջ է գտնվում քաղաքացի գաղթականութիւնը. ոչ կարող է առաջ գնալ և ոչ էլ ետ, որովհետև ամբողջ քաղաքը աւեր դրութեան մէջ է գտնվում։

Առ այժմ քաղաքացի գաղթականները ապրում են գիւղերում անտանելի վատ պայմաններում. ամեն մի գիւղում ապրում են 25—30 հոգի։

Ուսուցիչ Վահան Ամիրջանեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՖԼԻՍ

✠ Երէկ առաւօտեան Թիֆլիսի թերթերի ներկայացուցիչները հրաւիրվեցին կոմս Շուլենբուրգի մօտ, որը յայտնեց հաշտութ. պայմանագիրը ստորագրելու մասին և պայմանագրի գերմաներէն բնագիրը տուեց նայելու: Պայմանագիրը ստացվել է բազմոցով: Կոմս Շուլենբուրգը յայտնել է, թէ անյարմար է գտնում ստորագրելու համար, մինչև որ դա չը հրատարակէր վրաց հանրապետութիւնը: Գերմ. դեսպանատան անդամը ժուռնալիստների հետ ունեցած զրուցատրութեան միջոցին մի քանի անգամ մատնանշեց, որ հաշտութիւնը Թիւրքերը ստորագրել են Գերմանիայի ստիպմամբով, և յայտ է յայտնել, որ տեղական մամուլը կընդգծի այդ հանգամանքը: Բացի այդ, նոյն անդամը դեսպանութեան՝ պատրաստակամութիւն յայտնեց մամուլին տալ ամեն տեսակ տեղեկութիւններ, որ կը ստանայ դեսպանատունը բազմոցի միջոցով գերմանական, թիւրքական և այլ աղբիւրներից, նաև խոստացաւ իր աջակցութիւնը, որ տեղական թերթերը կարողանան ստանալ գերմանական և ուկրայնական թերթեր:

◆ Վրաստանի երկաթուղիների պետը հեռախօսով խնդրում է ճան. հաղ. մինիստրին, թէ որովհետև խիստ անհրաժեշտ է, որ բոլոր կայարանները զարդարվեն վրաց ազգային դրօշակներով, և հնարաւորութիւն չունենալով հարկաւոր եղած մանուֆակտուրա գնելու, նրա չը լինելու պատճառով, խնդրում է շատ կարգով ուղարկել 500 արշին սև և մանիշակագոյն կտոր:

◆ Վրաց կառավարութիւնը որոշել է, որ ֆինանսների մինիստրութիւնը տպագրվող թղթերի մի մասը տայ հայ և մուսուլման ազգային խորհուրդներին:

◆ Վրաց պետական վերահսկիչի պաշտօնի համար առաջ է քաշվում Ֆ. Գոգեչայշվիլիի թեկնածութիւնը:

◆ Երէկ արագընթաց գնացքով Բաթումից եկաւ վրաց հաշտարար պատուիրակութեան անդամ Գր. Ս. Ռցխիլաձէ:

◆ Հնչակեան կուսակցութիւնը հրատարակել է մի թռուցիկ, որով բողոքում է ներկայ Ազգ. Խորհրդի դէմ, գտնելով որ նա կորցրել է հայ ժողովրդի ամբողջ վստահութիւնը, և առաջարկում է նրան. 1) Հրաժարվել կամայականօրէն իւրացրած իր բոլոր իրաւասութիւններից և պարտականութիւններից: 2) Անմիջապէս կազմել նոր ժամանակաւոր Ազգային Խորհուրդ բոլոր քաղաքական, յեղափոխական և սոցիալիստական կազմակերպութիւնների հաւասար թւով ներկայացուցիչներից: 3) Բոլոր բանակցութիւններն ու գործառնութիւնները, որոնք բղխում են ներկայ Ազգային Խորհրդից, համարել չեղեալ և զուրկ օրինական ոյժից:

◆ Երկուշաբթի օրերը լոյս տեսնող դաշնակցական «Լրաբեր» թերթը (№ 2) տպել է մի առաջնորդող յօդուած, որի մէջ ջանում է ապացուցել, թէ հայ ժողովրդի ներկայ սոսկալի ողբերգական դրութեան պատճառը և մեղաւորը ամենքն են, բացի միայն Դաշնակցութիւնից, որ միայն հայ ազգի փրկիչն է եղել: Հակառակ կարծիք ունեցողներին, նա, ըստ դաշնակցական սովորութեան, անուանում է անխիղճ, ոսկրացած ուղեղ, մէշչանական անատամ բերան, կեղծող, սատող, զրպարտող, [illegible] գոռ սաղուկ, քայքայական, մի խօսքով դաշնակցական բառարանի բոլոր արսենալը հաւաքած է բերված: Չը կամենալով այսպիսի ծանր օրերում բանակռիւ սկսել, մենք միայն այս կասենք, ամենից լաւ դատաւորը ինքը ժողովուրդն է, թող «Լրաբեր»-ը դիմէ ժողովրդին և լսէ նրա կարծիքը Դաշնակցութեան մասին:

◆ «Աւրոմօյլ» կոօպերատիվը, որի հիմնադիրները վրացիներ էին, աւարտում է իր գործը: Դեֆիցիտը հաւասարվում է 40,000 րուբլու...

◆ Թիֆլիսի ամառային ժողովարանի թատրոնում այսօր, յունիսի 5-ին, Ց. Ոսկանեանի օպերէտային խումբը կը ներկայացնէ ըստ աշուղ Ջիւանու պատմուածքի «Աշուղ Ղարիբ»: Կը լինի բալէտ մասնակցութեամբ պ. Ալբերտի:

◆ Հաստատ աղբիւրներից բղխող տեղեկութիւնների համաձայն Ա. Ի. Չխենկելին Կոնստանցայի վրայով մեկնել է Բեռլին, ուր պէտք է լինէր յունիսի 3 ին:

◆ Արդարադատ. մինիստրը կազմել է մի յանձնաժողով, քննելու բանտարկեալների պահանջները:

◆ Յունիսի 1-ին, բ. և գ. խորհրդի նիստում զեկուցում տուեց Վ. Ջուղելին Սուխումի շրջանի անցքերի մասին և Ծերեթելին ներկայ մօմենտի մասին: Այդ զեկուցումների առիթով տեղեկութիւն տուեց Գ. Մախարաձէն: Զեկուցումների շուրջը տեղի ունեցան երկար վիճաբանութիւններ մինչև գիշերվայ ժամը 3-ը: Խորհուրդը ընդունեց բանաձևը, որ հաւանութիւն էր տալիս գործադիր կոմիտէի որոշումին՝ աջակցել վրաց կառավարութեանը երկրի պաշտպանութեան գործում թէ արտաքին թշնամուց և թէ ներքին անիշխանութիւնից:

◆ Ն. Ռ. Աբրահամեանի հաշուապահական դասընթացներում, այս ուսումն. տարում, բոլոր բաժանմունքներում ունկնդիրներ և ունկնդրուհիներ եղել են, օֆիցերների և զին. պաշտօնեաների հետ միասին, 277 մարդ (70% տղամարդ և 30% կին): Դասընթացները աւարտողները ըստ ազգութիւնների բաժանվում են՝ 45% հայ, 25% վրացի, 20% ռուս, 5% թաթար և 5% մնացած ազգութիւններից:

◆ Վրաստանը անկախ պետութիւն հռչակելու պատճառով, լիտվական երկրային խորհուրդը տեղեկացրեց կառավարութեան, որ ժամանակաւորապէս, մինչև դիպլօմատիական ձևական կապեր հաստատելը Վրաստանի և Լիտվայի մէջ, Լիտվայի քաղաքացիների շահերի պաշտպանութիւնը Վրաստանում խորհուրդը վերցնում է իր վրա, որի մասին յայտնված է լիտվական կառավարութեան՝ Վիլնա:

ՄԱՀՄԵԴԱԿԱՆՆԵՐԻ ԿԵԱՆՔ

ՄԱՀՄԵԴԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿՈՄԻՏԷԻ ՄԷՋ

Կիրակի օրը կայացաւ Թիֆլիսի մահմեդական խորհրդի նիստը, ուր, երկարատև վիճաբանութիւններից յետոյ, ընդունվեց հետևեալ բանաձևը.

1) Ստեղծված դրութեան պատճառով Թիֆլիսի մահմեդական ազգային կոմիտէն ճանաչում է Ադրբեջանի անկախութիւնը:

Իսկ վերաբերում է մահմեդական կենտրոնական ազգային խորհրդին, որ ճնշող մեծամասնութեամբ բաղկացած է «Մուսավաթ» կուսակցութեան անդամներից, որոնք կործանեցին երկիրը և հասցրին նրան մինչև այժմեան դրութիւնը, Թիֆլիսի ազգային կոմիտէն իր անվստահութիւնն է յայտնում կենտրոնական խորհրդին և առաջարկում է նրան չը միջամտել վրացական տերրիտորիայի վրա մնացած մահմեդականների գործերին:

2) Թիֆլիսի մահմեդական ազգային խորհուրդը յայտարարում է իրեն վրացական հանրապետութեան մահմեդականների ժամանակաւոր ազգային խորհուրդ և նախաձեռնութիւն է վերցնում գումարել մօտիկ ապագայում վրաց հանրապետութեան մահմեդականների ազգային համագումար:

3) Բռնելով Արևելեան Անդրկովկասում ստեղծված դրութիւնը, որ լի է անիշխանութեամբ, կոմիտէն առաջարկում է Ադրբեջանի հանրապետութեան կառավարութեանը մեկնել անյապաղ տեղերը՝ Ադրբեջանի հանրապետութեան քաղաքացիներին պաշտպանելու համար:

ՄԱՄՈՒԼ

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ

Տեղական գերմանական օրգան «Կավկազիշէ Պօստը» գրում է.

Ֆրանսիական յայտնի առակը ասում է՝ «ախորժակը բացվում է ուտելու հետ»: Թէև թիւրքերը այս պատերազմի ժամանակ հանդիսանում են ֆրանսիացիների հակառակորդներ, այնուամենայնիւ ուտելու հարցում նրանք հետևում են նրանց փորձին: Նրանք երևան են հանում այնպիսի ախորժակ, որ ուղղակի անցնում է կանիբալի ախորժակից:

Ուղղակի ծաղրելի է, որ Բոսֆորի «հիւանդ մարդը» և այն էլ այդպիսի հզօր կլանող... Կարդում ես և զարմանում (բերում է Թիւրքաց կառավարութեան վերջնագիրը): Այդ վերջնագիրը պատճառաբանված է այն [illegible] ձևով, թէ հարիւր հազարաւոր (?) թիւրքեր և մահմեդականներ Բաթումում և նրա շրջակայքում ենթարկվում են արիւնառուշտ հրոսակախմբերի, այսպէս կոչված յեղափոխականների կոտորածին և նրանց սպառնում է աղէտ...

Վերջը լրագիրը խոստանում է յայտնել մօտիկ ապագայում, թէ ինչ նպատակ ունէր գերմանական հաշտութեան պատգամաւորութեան նախագահ ֆօն Լոսովի անակնկալ մեկնումը Բեռլին Փոթիի վրայով...

ՄԱՄՈՒԼԸ ՎՐԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

«Սախալխօ Սաքմէ»

Այն օրից, երբ պարզվեց, որ անդրկովկասեան ժողովուրդների մէջ գոյութիւն չունի ցանկալի ու բոլոր կովկասեան ազգերի համար օգտակար միութիւն, այն օրից, երբ Արևելեան Կովկասի մուսավաթիստների համակրութեան օգնութեամբ Թիւրքիան կարողացաւ առաջանալ և [illegible] գրաւել Անդրկովկասի մեծ մասը, բոլորի համար պարզ դարձաւ, որ Վրաստանն ընկնում է սոսկալի վիճակի մէջ, եթէ նա ինքը չը մտածէր իր մասին: Վրաստանը յայտարարեց իրան անկախ պետութիւն: Բայց այդ անկախութիւնը կարիք ունի պաշտպանութեան ու ամրապնդման:

Թող ոչ ոք չը մտածի, թէ Վրաստանի համար աւելի դժուար կը լինի պաշտպանվել, քան այն ժամանակ, երբ նա հանդիսանում էր Անդրկովկասի մասը. ճիշդ է, Անդրկովկասը տերրիտորիայով մեծ է Վրաստանից, բայց այդ ընդարձակ տերրիտորիան պատերազմի համար տալիս էր անհամեմատ քիչ ռազմական նիւթ և դրա խանգարում էր գործին: Այժմ Վրաստանը ներկայացնում է մի քաղաքական միութիւն, և դա մի [illegible] պէտք է շարժման բերէ ամբողջ Վրաստանը: Փրկութիւնը միայն մեր ձեռքումն է:

Վրաց ժողովուրդը համարձակ է ըստ ժառանգութեան: Նա առանց կռւի ոչ ոքի չի զիջէ իր հայրենիքը: Անհրաժեշտ է, որ Վրաստանի կառավարութիւնը զէնքի կոչէ այնքան ոյժ, որքան անհրաժեշտ է սահմանների պաշտպանութեան համար: Ամրացնենք Վրաստանը զօրաւոր պատի վրա և թիկունքում, և մեր պետութիւնը այդպիսով կարող է վանել լկտիացած թշնամուն:

«Էրթօբա»

Վրաստանը յայտարարեց իրան դեմոկրատիական հանրապետութիւն, կամենալով փրկել մեր ժողովուրդը ջարդից: Մերձաւոր ապագան ցոյց կը տայ, թէ որ աստիճան նպատակայարմար էր այդ որոշումը: Այսօր չի կարելի վճռապէս ասել, թէ ինչ կը լինի մեր ապագան: Եթէ մեր ժողովուրդը ազատվի կործանումից, նպատակը բոլորովին իրագործված կը լինի:

Մեզ մօտ ապրող մնացած ազգերի թւում, մանաւանդ հայերի մէջ Վրաստանի անկախութիւնը անպայման առաջ կը բերէ տագնապ: Ճիշդ է, հայ դեմոկրատ շրջանները լիովին զգում են այն մեծ վտանգը, որ բացվում է մեր դռներում, բայց նրանց այժմեան դրութիւնն այն աստիճան ողբերգական է, նրանց գոյութիւնը կանգնած է այնպիսի վտանգի առաջ, որ նրանք հեշտութեամբ կարող են ընկնել հոգեկան էֆֆեկտների ցանցի մէջ:

Մեր պարտականութիւնն է, ոչ միայն դեմոկրատիական, այլ և մարդասիրական, պարզել հարևան ազգին անկեղծ եղբայրական ձեռք և ամեն միջոց ձեռք առնել նրա դրութիւնը թեթևացնելու համար: Կարող են ասել «խեղդվողը կամենում է օգնել ուրիշին»: Մենք չը գիտենք, թէ ինչ կը լինի վաղը, բայց այսօր մենք իսկապէս գտնվում ենք սարսափելի դրութեան մէջ, իսկ հայ ազգը աւելի վատթար վիճակումն է: Մենք արժանի չենք լինի ազատութեան, եթէ չը հասկանանք ուրիշի տանջանքներն ու ցաւերը: Վրաց ժողովուրդը չը պէտք է դառնայ այն կրպակատէրի նման, որ օր ու գիշեր միայն իր օգտի մասին է մտածում: Այդ տեսակ կրպակատէրը մեռնում է, և ոչ ոք այլևս չի արտասանում նրա անունը, նրա անունը մեռնում է նրա հետ միասին: Բուլղարիան երբ վասալ էր Թիւրքիային, չը վախեցաւ իր անօգնական վիճակից և եղբայրական ձեռք մեկնեց հայ ազգին, երբ վերջինս հալածանքների մէջ էր: Բուլղարիան դրանով բարձրացաւ ինչպէս իր ժողովրդի, այնպէս և ամբողջ մարդկութեան աչքում: Մեր դեմոկրատիան չէ կարող հետ մնալ Բուլղարիայից և կը կատարէ իր պարտականութիւնը եղբայր ժողովուրդների վերաբերմամբ:

ԺՈՂՈՎՆԵՐՈՒՄ

ՄԱՅԻՍԻ 26-Ի ԺՈՂՈՎԸ

Մենք խոստացանք տալ մանրամասնութիւնները այն մեծ ժողովի, որ մայիսի 26-ին կայացաւ Կոնսերվատորիայի դահլիճում նախաձեռնութեամբ հայ ժողովրդ. կուսակցութեան կենտրոն. վարչութեան և որին մասնակցում էին հրաւէրով 300-ից աւելի ներկայացուցիչներ ազգային-հասարակական, զանազան կուլտուրական, բարեգործական հաստատութիւնների, հայրենակցական միութիւնների, զանազան դասակարգերի և խաւերի:

Հ. Ժող. Կուսակց. կենտր. վարչութեան փոխ նախագահ Հ. Առաքելեան, բանալով ժողովը, առաջարկեց ընտրել նախագահ երդուեալ հաւատարմատար Արշակ Բարխուդարեանին և քարտուղար Ա. Կանայեանին, որ և ընդունվեց:

Նախագահը ողջոյնի մի քանի խօսքից յետոյ խօսք տուեց Հ. Առաքելեանին, որ արտասանեց հետևեալ ճառը.

Դուք ամենքդ գիտէք այն սոսկալի ճգնաժամային դրութիւնը, որի մէջ գտնվում է այսօր ամբողջ հայ ժողովուրդը, որ գրեթէ խելակորոյս, անդեկ նաւի նման, յանձնվել է ալեկոծվող ծովին և կարող է ամեն րոպէ կլանվել: Միայն պաղարիւն գիտակցութիւնը կարող է եթէ ոչ փրկել վտանգից, գոնէ ամոքել, մեղմացնել վտանգի հետևանքները: Այսպիսի մի ժամանակ անհրաժեշտ է, որ հայ գիտակից խաւերը խորհրդակցեն, ժամ առաջ ինչպէս փրկել խորտակվող նաւը:

Նա պէտք է ցուցադրէ, թէ ինչու հայ

կու: Այս բոլշևիկներից առ ժամանակ հեռացված բոլշևիկը արտասանում է գովեստներ վերջինների հասցէին՝ «Բոլշևիզմը դա համաշխարհային երևոյթ է, որ տանում է մեզ այն բանին, թէ [illegible] ուզում է լինել ազատված»:

Սոց.-դեմոկրատների և Բունդի կողմից խօսում է ընկ. Ռաֆէս: Նա յայտարարում է գերման հրամանատարութեան պաշտօնական յայտագիրը, որը արգելում է մայիսի 1-ը տօնել առանց հրամանատարութեան թոյլտուութեան: Ճառախօսը մանրամասնօրէն կանգ է առնում Բունդի և մենշևիկների ողբերգական դրութեան վրա:

Գերման զինուորների ներս բերումը

Ընկեր Ռաֆէսը արդէն վերջացնում էր իր ճառը, երբ որ դահլիճ բարձրացող սանդուղների վրայից լսվեց զինուորների ոտքերի արփիւնը: Ժամը 3 և 45 րոպէին դրան մօտ երևաց գերմանական մի լէյտենանտ գերման զինուորների մի զօրամասով, սաղաւարտները գլուխներին և զինված հրացաններով, ատրճանակներով և սուիններով:

— Գերմանական կառավարութեան անունով, — բարձրաձայն գոչեց լէյտենանտը ռուսերէն, — ձեռքներդ վեր! ձեռքներդ վեր! Չը շարժվէք տեղից:

Ռադայի անդամները, մամուլի ներկայացուցիչներն ու հանդիսականները, բոլորն էլ հլու կերպով ձեռքերը վեր բարձրացրին:

Ձեռքերը վեր բարձրացրած կանգնած էին նոյնպէս և արդարադատութեան մինիստր Շէլուխինը, և ֆինանսների մինիստր Կլիմովիչը և արդարադատութեան մինիստր Պրոկոպովիչը, և պոստ հեռագրական մինիստրի օգնական Շտեֆանը, և ներքին գործերի վարչական-քաղաքական դեպարտամենտի դիրեկտոր Գայեվսկին և ուրիշները:

Միայն Ռադայի նախագահ Մ. Ս. Գրուշևսկին էր, որ, առանց ձեռքերը վեր բարձրացնելու, արտաքուստ անվրդով նստել էր իր տեղը: Եւ միայն դէմքի վրա երբեմնակի երևացող կաս-կարմիր պուտերն էին երևան հանում ներքին յուզումը:

Ներս խուժող զինուորները ցրվեցին դահլիճում, ուղղելով ատրճանակները ներկայ եղողների վրա, որոնք ձեռքերը վեր բարձրացրած մնացել էին անշարժ իրանց տեղերում: Ատրճանակներ էին ուղղված նաև պրոֆեսոր Մ. Ս. Գրուշևսկու դէմ:

— Ես վճռականապէս բողոքում եմ Ռադայի շէնքում զինուորներ մտցնելու համար, — յայտնում է ուկրայներէն լեզուով պրոֆ. Մ. Ս. Գրուշևսկին:

— Ո՞վ էք դուք, — ընդհատեց նրան լէյտենանտը:

— Ես կենտրոնական Ռադայի նախագահ Գրուշևսկին եմ:

— Հա, Գրուշևսկի, — ասաց լէյտենանտը: — Բայց միայն այստեղ ես կարող եմ խօսել:

— Ո՞ւր է զինուորական մինիստր Ժուկովսկին: Ո՞ւր է ներքին գործերի մինիստր Տկաչենկոն, — սկսեց բարձրաձայն կանչել լէյտենանտը. — Ո՞ւր է մինիստր Կովալևսկին: Ո՞ւր է Գայեվսկին:

Լռութիւն:

Ոչ Տկաչենկոն, ոչ Ժուկովսկին, ոչ Կովալևսկին դահլիճում չէին:

— Ես այստեղ եմ, — պատասխանեց ներքին գործերի մինիստրի վարչական քաղաքական դեպարտամենտի դիրեկտոր Գայեվսկին:

Լէյտենանտի հրամանով մի խումբ զինուորներ շրջապատեցին Գայեվսկին և դուրս տարան նիստերի դահլիճից:

— Որտեղ է ապրում Տկաչենկոն, — դիմում է լէյտենանտը Մ. Վ. Պորշին:

— Չը գիտեմ, — պատասխանում է Պորշը, վեր բարձրացրած ձեռքերից մէկում բռնած «Neue Freie Presse» թերթի մի համարը, իսկ միւսում՝ անցագիրը:

Լէյտենանտը գտաւ վերջապէս կենտրոն. Ռադայի պրիստաւին ու սկսեց նրա հետ ինչ որ բանի մասին խօսել: Պրիստաւը պոկեց իր թևից դեղնա-կապոյտ կապը:

— Իսկ այժմ, — գոչեց ռուսերէն լէյտենանտը, — ամենքդ էլ, ում մօտ կայ զէնք, անմիջապէս պէտք է յանձնէք, դնէք այստեղ սեղանի վրա: Ով չը յանձնի մօտը եղած զէնքը, նա խիստ պատիժ կը կրի: Մենք յետոյ բոլորիդ էլ կը խուզարկենք:

— Ես վճռականապէս բողոքում եմ պարլամենտի շէնքում խուզարկելու համար, — յայտարարում է Գրուշևսկին:

— Ով չը յանձնի իր զէնքը, — յայտնում է գերմաներէն միւս լէյտենանտը, — և նրա մօտ այդպիսին գտնվի յետոյ, նա անմիջապէս կը գնդակահարվի:

Մամուլի ներկայացուցիչներից մէկը դիմում է առաջին լէյտենանտին.

— Դուք ճիշդ չէք թարգմանում: Ձեր կոլլէգան սպառնում է գնդակահար անել, այն ինչ դուք ռուսերէն յայտնեցիք միայն, որ խիստ պատժի կենթարկէք:

— Ոչինչ, — հանգիստ կերպով պատասխանում է լէյտենանտը, — գնդակահարութիւնն էլ պատիժ է:

Նորից է կոչ անվում յանձնելու զէնքերը:

— Ձեռքներդ իջեցրէք, — հրամայում է գերմաներէն երկրորդ լէյտենանտը:

Ներկայ եղողները ձեռքերը իջեցնում են: Նախագահութեան սեղանին մօտենում են մի քանի հոգի, որոնք սկսում են դնել իրանց ատրճանակները Մ. Ս. Գրուշևսկու առջև, սեղանի վրա:

Լէյտենանտները բլօկնօտները ձեռքներին հետզհետէ մօտենում են պատգամաւորներից իւրաքանչիւրին:

Իրար ետևից նրանք ցուցակագրում են նիստին ներկայ գտնվող Ռադայի բոլոր անդամներին:

Ցուցակագրված ամեն մի պատգամաւոր պահակների ուղեկցութեամբ տարվում է նիստերի դահլիճին կից առանձին սենեակը, ուր քիչ յետոյ բերվեցին Ռադայի բոլոր անդամները:

Նախագահական սեղանի առջև նստած Գրուշևսկու մօտից անցնելիս՝ Ռադայի անդամներից իւրաքանչիւրը լռելեայն սեղմում է նրա ձեռքը:

Դռների առջև դուրս եկողները ենթարկվում էին խուզարկութեան, պարզելու թէ զէնք չունեն նրանք իրանց մօտ:

— Առաջարկեցէք հասարակութեանը ցրվել իրանց տները, — դիմում է լէյտենանտը պրոֆ. Գրուշևսկուն:

— Ես այդ չեմ անի, — հանգիստ կերպով պատասխանում է պրոֆ. Գրուշևսկին:

— Առաջարկեցէք հասարակութեանը ցրվել, — նորից է կրկնում լէյտենանտը:

— Ես այդ չեմ անի, — նորից է պատասխանում Գրուշևսկին:

Լէյտենանտը երրորդ անգամ կրկնում է իր առաջարկը և երրորդ անգամ ստանում կենտրոնական Ռադայի նախագահի կողմից կտրական մերժում:

Այն ժամանակ լէյտենանտը ինքն է առաջարկում հասարակութեանը թողնել դահլիճը և ցրվել:

Դահլիճում մնում է միայն կենտր. Ռադայի նախագահ Մ. Ս. Գրուշևսկի և նրա քարտուղարը՝ Դօնիսենկօ:

Այնուհետև սկսվեց ընդհանուր խուզարկութիւն Ռադայի շէնքի մէջ:

Ռադայի շէնքից աւտոմոբիլով տարվեց այնտեղ բանտարկված ներքին գործերի մինիստրութեան վարչական-քաղաքական բաժանմունքի տեսուչ պ. Գայեվսկին: Նոյն աւտոմոբիլով տարվեց Ռադայի շէնքում պատահմամբ գտնվող արտաքին գործերի մինիստրութեան կառավարիչ պ. Լիւբարսկին: Վերջինս շուտով ազատ թողնվեց: Ռադայի շէնքում մնաց, իբրև տնային բանտարկեալ, պրոֆ. Գրուշևսկին: Դռների մօտ կային գերմանական պահակներ:

Նիստ, 29 ապրիլի

Վաղ առաւօտից Ռադայի շէնքում կեանքը սկսեց եռ գալ:

Արտաքուստ պատկերը նոյնն էր, ինչ որ նկատվում էր միշտ Ուկրայնայի պատմութեան աղմկայոյզ օրերին:

Ռադայի շէնքի առաջ խռնվել էին ժողովրդի խմբակներ, որոնք յուզված վիճում են երէկվայ դէպքերի մասին: Ռադայի դռների մօտ սովորական ուկրայնական պահակներ:

Շատ լուրեր են պտտում նաև կենտրոնական Ռադայից դուրս տեղի ունեցած դէպքերի մասին:

Հաղորդում են ուկրայնական կառավարութեան անդամների առանձին բանտարկութիւնների մասին, բայց մասամբ հէնց այդտեղ էլ հերքվում են:

Типографія
Андраника Ал. Мугдусакова
ТИФЛИСЪ - АВЛАБАРЪ
Лазаревская 3. дворъ Арутюнова
Принимаетъ всевозможныя работы, а именно: объявленія, афиши, программы
счета, визитныя карточки, газеты, адреса, пригласительные и свадебные билеты
свидѣтельства и похвальные листы, бланки, ярлыки, этикеты и т. п.
ТАМЪ-ЖЕ ПРИГОТОВЛЯЮТЪ ШТЕМПЕЛЯ ПЕЧАТИ

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ
ԲԺԻՇԿ Վ. ԽԱՉԱՏՐԵԱՆԻ
1) Малокровіе и его леченіе 25 к.
2) Легочныя заболѣванія 25 к.
3) Гигіена женщины I часть 1 р.
4) Վեներական ախտեր 1 р.
Ինչպէս վերոյիշեալ, նոյնպէս բոլոր այլ բժշկական գրքոյկների համար դիմել «Գուտտենբերգ» և «Գիր» գրավաճառանոցներին:
Պահեստը մեծաքանակ գնողների համար՝ Тифлисъ, Вознесенская ул. № 8. кв. Д-ра В.А. Хачатрянца.
(Ն. Հ. Կ.) 297. 40—6

ՀԱՐԿԱՒՈՐ ԵՆ
Կօշկակար վարպետներ
վիվօրոտնի գործի համար: Դիմել՝ Серебряная ул., № 50.
425 3—1

„ՄՇԱԿԻ" խմբագրատանը
Վաճառվում են
ՅՕԳՈՒՏ ՀԱՅ ԱՐԿԱԾԵԱԼՆԵՐԻ
Հետևեալ հրատարակութիւնները
1) «Հացի կտոր զէյթունցուն», յօգուտ Զէյթունի հայ սովեալների 3 ր.
2) «Շէքսպիր և իր «Համլէտ» ողբերգութեան աղբիւրն ու [illegible] թիւնները», Պ. Աղամեանի . . 1 ր. 50 կ.
3) «Երկասիրութիւնների առաջին հատորիկ», Քամալեանց Մ.-ի . . 75 կ.
Վերադիր վճարով պատուէր չէ ընդունվում: Ճանապարհածախսը պատուիրողի վրա:

ժող. Կուսակցութիւնը ստանձնել այսպիսի մի ժողով գումարելու նախաձեռնութիւնը, որը, թերեւս, պէտք է պատկանէր Ազգային Խորհրդին։ Պէտք է ասել, որ մեր Ազգ. Խորհուրդը և Ժողովը կազմված են կուսակցական սկզբունքով. դրա հետեւանքն այն է եղել, որ շատ հոսանքներ, խաւեր և գիտակից ու փորձառու անձինք, որոնք անկախ, չէզոք հայեացքի տէր են, կամ այս և այն պատճառով ոչ մի կուսակցութեան չեն յարել, հեռացել են դուրս ազգային շարժումից և գործերի ղեկավարութիւնից։ Այսօր հասել է մի րոպէ, երբ ակնյայտ և ակներեւ ճշմարտութիւն է, որ մեր քաղաքական կուսակցութիւնների վարած ազգային քաղաքականութիւնը և գործելակերպը հասցրել է մեր ժողովուրդը մի մեծ աղէտի. մենք պարտված ենք և պարտված ենք անհասկանալի, անդառնալի կերպով. այս պարտութիւնը մենք պէտք է խոստովանենք։ Այդ պարտութեան հետեւանքով, մեզ հայերիս համար այլեւս այս րոպէին ուրիշ որեւէ սոցիալական, յեղափոխական, քաղաքական հարց չը կայ, բացի մի կապիտալ հարցից՝ փրկել հայ ժողովրդի ֆիզիկական գոյութիւնը։ Ահա դրա համար պէտք է մտածել, ուստի և Հայ Ժող. Կուսակց. անհրաժեշտ գտաւ դիմել նախկին եղանակին, այն է՝ հրաւիրել ոչ կուսակցական ժողով, այլ հրաւիրել ազգային և հասարակական զանազան կազմակերպութիւնների, հաստատութիւնների, կուլտուրական լուսաւորական հիմնարկութիւնների, զանազան դասակարգերի —վաճառականութեան, արհեստաւորների, հոգեւորականութեան, ինտելիգենտ պրոֆեսիաների— ներկայացուցիչների խորհրդակցութիւն։ Մենք անհրաժեշտ գտանք լսել երկրի ձայնը, ի դէմս հայ ժողովրդի զանազան դասակարգերի և խաւերի։ Ահա այդպիսի մի հասարակական համախորհրդակցութիւն գումարելու նախաձեռնութիւնն է ստանձնել Հայ Ժող. Կուսակցութիւնը, որ առաջ է եկել կեանքի հրամայողական պահանջով՝ պաշտպանելու հայ ժողովրդի շահերը։

Մեր ազգային ամենամեծ դժբաղդութիւնն այն է եղել, որ մենք դիֆերենցիացիա, տարբերականութիւններ չենք ունեցել. մեր մէջ չեն եղել ռեզերվի համար մի քանի հոսանքներ, որոնք տարբեր ժամանակներում, տարբեր պահանջների ժամանակ, տարբեր կոնյուկտուրաների ժամանակ հանդէս գային հայ ազգի շահերը և իրաւունքները պաշտպանելու։ Վերցրէք որ կուլտուրական ազգ որ կամենաք. վերցնենք ռուսներին. նրանք ունեցել են և ունեն գերմանոֆիլներ՝ ի դէմս Վիտտէի, Շտիւրմէրի և ֆրանկոֆիլներ՝ ի դէմս Սազոնովի և այլոց. վերցրէք ռումիններին. նրանք ունեն Բրատիանու և Մարգիլոման. առաջինը՝ ռուսոֆիլ, երկրորդը՝ գերմանոֆիլ. վերցրէք վրացիներին. նրանք ունեն սոցիալիստներ, ազգային-դեմոկրատներ՝ ռուսասէրներ և գերմանասէր - թիւրքասէրներ։ Երբ մի հոսանք երկրի և պետութեան մէջ պարտութիւն է կրում իր վարած քաղաքականութեան պատճառով, հանդէս է գալիս նրա հակառակ մի այլ հոսանք, որ փրկում է դրութիւնը։ Վերցրէք լեհերին, որոնք ունեն գերմանոֆիլներ և ռուսոֆիլներ։ Վերցրէք տգէտ և անկիրթ համարված Թուրքերին. Նրանք ունեցել են ռուսոֆիլներ և թիւրքոֆիլներ։

Մենք հայերս մի տարօրինակ բացառութիւն ենք կազմել. մենք կարողացել ենք ստեղծել միայն մի կուսակցութիւն, որին տուել ենք ամեն բան, ամեն իշխանութիւն. մենք ռեզերվի համար չենք պահել որեւէ մի ուրիշ հոսանք, որ երբ տիրող հոսանքի ուղղութեան պատճառով վտանգ ծագի՝ նրա հակառակ հոսանքը գայ փրկելու այդ վտանգից։ Նոյն իսկ իբրեւ ռեզերվ մենք չենք պահել մի կողմ և այն անձին, որ այսօր կարող էր թիւրքերի և գերմանացիների առաջ հանդէս գալ. դա հայոց կաթողիկոսն է. մենք նրան էլ ստիպեցինք դուրս գալ և հանդիսաւորապէս օրհնել Թիւրքիայի դէմ գնացող կամաւորական խմբերը, կազմված մեծ մասամբ Թիւրքահպատակներից, ղեկավարութեամբ նոյն իսկ թիւրքական պարլամենտի անդամների։ Եթէ մենք ռեզերվում ունենայինք այսօր այդ կաթողիկոսին, որ չէզոք դիրք բռնած լինէր, այսօր նա կարող էր հանդէս գալ։

Երբ Իզմիրլեան պատրիարքի քաղաքականութիւնը պարտութիւն կրեց և հայ ժողովուրդը Թիւրքիայում մեծ վտանգի ենթարկվեց, Կ. Պոլսի հայ խելացի ղեկավարները առաջ քաշեցին Օրմանեանին, որ կարողացաւ փրկել դրութիւնը և ազատել հայ ժողովուրդը երկրորդ մեծ կոտորածից։ Բայց այդ խելացի քաղաքականութիւնը շուտով մոռացան թիւրքահայերը, իսկ մենք ռուսահայերս ուղղակի խելագարութեան հասանք։ Երբ կատարվում էին ընտրութիւններ, մենք մեր բոլոր ձայները տալիս էինք մի կուսակցութեան. նոյն իսկ հայ բուրժուազիան իր ձայները տուեց այդ կուսակցութեան, և մենք պետական հաստատութիւնների մէջ, ինչպէս և ազգային հաստատութիւնների մէջ ունեցանք միայն մի կուսակցութեան ներկայացուցիչներ՝ միակողմանի ուղղութեամբ։ Ռեզերվի համար մենք չը պահեցինք, ինչպէս վրացիները, մի այլ կուսակցութիւն։ Ինքն այն կուսակցութիւնը, որ ստացաւ բոլոր ձայները, չունեցաւ քաղաքական հեռատեսութիւն և հայրենասիրութիւն՝ թոյլ տալու որ ուրիշ հոսանքներ էլ ստեղծվեն. ամեն մէկը, որ քննադատում էր նրա գործունէութիւնը կամ ջանքեր էր թափում մի նոր հոսանք ստեղծելու, որակվում էր «դաւաճան» անունով. Թուրքերը աւելի հեռատես և քաղաքագէտ գտնվեցին. նրանք մտցրին մեջլիսի և այլ հաստատութիւնների մէջ զանազան հոսանքների ներկայացուցիչներ. նոյնը և վրացիները։

Եւ ահա այսօր, երբ ստեղծվել է կատաստրոֆա, երբ մեր թշնամին՝ Թիւրքերն յայտնում է, որ ոչ մի համաձայնութիւն հայի և թիւրքի միջև չէ կարող լինել որչափ ժամանակ հայոց ազգային գործերի գլուխ կանգնած կը լինեն դաշնակցականները, երբ այդ միեւնոյնը յայտնում են մեզ և գերմանացիները և մեր հարեւան Թուրքերը, նոյն իսկ վրացիները, այդ րոպէին մենք չունենք ռեզերվում մի ուրիշ զօրեղ կուսակցութիւն, որովհետեւ հայ ժողովուրդը իր բոլոր ձայները տուել է միայն մի կուսակցութեան, որ այսօր չէ զգում րոպէի անհրաժեշտութիւնը և պահանջը՝ նահանջել և տեղի տալ ուրիշներին։

Ներկայ խորհրդակցութիւնը լուրջ կերպով պէտք է զբաղուի այդ հարցով։

ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

ԼԵՆԻՆԻ ԵՒ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՅԻ ՄԱՍԻՆ

Խորհուրդների քաղաքականութեան նոր կուրսը, որ կենտրոնական գործադիր կոմիտէի նիստում ստացաւ վերջնական հաստատութիւն, ներկայումս դարձել է եռանդուն քննութեան առարկայ Մոսկվայի քաղաքական շրջաններում։

Մենշեվիկների և էսէրների ներկայացուցիչների կարծիքը այդ մասին հետեւեալն է.

Խորհուրդների իշխանութիւնը վճռել է ոտք դնել ստեղծագործական ճանապարհի վրա. Նա հրաժարվել է կարմիր գվարդիական արշաւանքից բուրժուազիայի դէմ։

Սակայն այդ առաջին տպաւորութիւնից յետոյ չի նկատվում ամենաէականը, ամենակարեւորը։

Եթէ մենշեվիկները խօսում են այժմեան կուրսի դէմ, միայն այն պատճառով, որովհետեւ այդ նոր կուրսը ոչ թէ վերածնելու կուրս է, ինչպէս այդ կամենում է ապացուցել Լենինը, այլ անձնական դիկտատուրայի հաստատման կուրս է։ Ոչ թէ պրոլետարիատի դիկտատուրա, ոչ նոյն իսկ կոմունիստական կուսակցութեան դիկտատուրա, այլ Վլադիմիր Իլիչ Ուլեանովի (Լենինի) դիկտատուրան։

Եւ այդ տեսակէտից Լենինը անպայման մի քայլ առաջ է գնացել։

Երբ Լենինը եկաւ արտասահմանից, հէնց առաջին իր ճառի մէջ նա առաջ բերեց լօզունգ՝

«Ամբողջ իշխանութիւնը խորհուրդներին»։

Անցաւ երեք ամիս, և յուլիսի 3—5-ի արիւնալի օրերից յետոյ «Ամբողջ իշխանութիւնը խորհուրդներին» լօզունգը փոխարինվեց «Ամբողջ իշխանութիւնը ամենաաղքատ գիւղացիութեանը և բանւորներին» լօզունգով, որ ըստ էութեան նշանակում է իշխանութեան յափշտակումն կոմունիստական կուսակցութեան ձեռքով։

Ու ահա այժմ, ըստ երեւոյթին, մենք ապրեցինք և այդ պատրանքը. ու հասել է անձնական դիկտատուրայի հերթը, որովհետեւ զուր չէր Լենինը ասում, թէ պատմութիւնը մեզ սովորեցնում է, որ մի անձի դիկտատուրան հանդիսանում է սոսկ պրոլետարիատի դիկտատուրայի ձեւ։

Ի հարկէ, դուք կասէք, թէ Լենինը պրոլետարիատի իդէօլոգիայի, հետեւողական յեղափոխականի իր բազմամեայ անցեալով անընդունակ է անձնական դիկտատոր լինել։ Բայց այդպէս կարող են խօսել միայն նրանք, որոնք լաւ ծանօթ չեն Լենինին։ Լենինը անկեղծ է, որ չափով կարող է անկեղծ լինել այդպիսի մարդ։ Նա հաւատում է, թէ նրա անձնական դիկտատուրան կը լինի պրոլետարիատի դիկտատուրայի ձեւը, բայց մենք, որ մի փոքր հասկացել ենք պատմութիւնը, գիտենք, թէ Բօնապարտի դիկտատուրան պատրաստող անձինք նոյն կերպ անկեղծ էին և նոյն կերպ մտածում էին, եթէ ոչ յեղափոխութեան փրկութեան մասին, գոնէ յեղափոխականների փրկութեան մասին։

Արդեօք կաջողվի՞ Լենինի փորձը։ Ո՞վ գիտէ։ Պատմութիւնը ցոյց է տալիս մեզ, որ հնարաւոր են քաղաքական գործիչների նոյն իսկ ուրիշ մետամորֆօզներ։

Սակայն եթէ Լենինի փորձը անաջող անցնի, դա կը լինի միայն նրա անձի վերաբերմամբ։ Կը գտնվեն ուրիշները կամ ուրիշը, որ կը կանգնէ Լենինի տեղը և կը տանէ գործը իր վախճանին։

Մենք կը պայքարենք դրա դէմ, կը պայքարենք յօգուտ դեմօկրատական յեղափոխութեան, նոյնիսկ գիտակցելով այս պատերազմի նախորոշած վերջաւորութիւնը։ Եւ մենք կամենում ենք հաւատալ, որ վաղ թէ ուշ այդ կռւի մէջ մեր կողմը կանցնեն շատերը այժմեան կոմունիստներից, որովհետեւ բոլշեվիկեան կուսակցութիւնը, ըստ էութեան, դադարել է լինել սոսկ սոցիալիստական, այլ և, օրէ օր, արագօրէն վերածվում է այնպիսի մարդկանց խառն խմբակի, որոնք Լենինին մղում են դէպի անձնական դիկտատուրայի ուղին, յոյս ունենալով դրանով ոչ այնքան փրկել Ռուսաստանը և յեղափոխութիւնը, որքան իրանց։

Խմբագիր-Հրատարակիչ՝

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԱՌԱՔԵԼԵԱՆ

ԽՈՂՄՆԱԿԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

«Մշակի» խմբագրատանն ստացված են նամակներ՝ յանձնելու իրանց հասցէատէրերին։ Այն նամակատէրերը, որոնք բացակայ են Թիֆլիսից, թող ուղարկեն մեզ ապահով հասցէ, որպէս զի իրանց նամակներն ուղարկենք ըստ պատկանելոյն։

Խաչատուր Բարսեղեանին՝ Fowler ից, Սերգէյ Սուրախանեանին, Գէորգ Բայարեանին, Պօղոս Մինասեանին՝ Մարտիրոս Յակոբեանին՝ Ուստրից, Արտաշէս Մարգարեանին՝ Երեւանից, Մկրտիչ Մարտիկեանին՝ Բուխարէստից, Խաչիկ Տէր-Բարսեղեան կամ Յովհաննիսեանին (Սեբաստիոյ Ուլաշ գիւղացի), Մարտիրոս Նազարէթեանին (սեբաստացի) Տրոյից, Ներսէս Սարգիսեան կամ Մոնծոյեանին՝ Ամերիկայից, Յակոբ Պետրոսեանին, Գառնիկ Նշանեանին, Յարութիւն Գարագէօզեանին և Բէրդէքեանին, Գէորգ Մուրադեանին, Գրիգոր Պողուտիկեանին, Յարութիւն Նորշահեանցին, Նորայր և Երուանդ Գրիգորեաններին, Աւետիս Եարըմեանին, Հմայեակ Փոլաճարեանին, Մկրտիչ Մելիքեանին (Սեբաստիայի Բոարբեդ գիւղացի), Միսաք Այրօ Խօճայեանին, Արշաւիր Մելիք Սայեադեանին, Գրիգոր Եգիկեանին, Աւետիք Սրապեանին կամ Եզեկիէլ Թոնիկեանին, Խաչատուր Տէր-Ստեփանեանին, Խաչատուր Թաշճեանին, Վաղարշակ Առիկեանին, Յովհ. Մեսիայեանին, Մարգարիտ Խարակէզուրեանին՝ Մարտիրոս Վարդանեանի միջոցով, Մարգար Տէր-Մկրտչեանին, Գէորգ Յովսէփեանին, Զապէլ Եսայեանին, Յարութիւն Կարապետեանին, Ռուբէն Սանթուրեանին, Հայկ Պալեանին, Տիգրան Թովմասեանին, Աննա Ազգապետեանին, Արմէն Քէշիշեանին, Նշան Տիրացուեանին, Յովհ. Արիստակէսեանին, Կատարինէ Մելիք-Շահնազարեանին, տ. Սուսաննա Շէքերջեանին։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բժշկ. Բ. Նաւասարդեանի
Հիմնված 1880 թ.
([illegible] Վօրօնցովի փողոց [illegible])
Բաց է
Ամեն օր, բացի կիրակի օրերից
«308» եւ «914»-ի ներքոյակում բժշկական խորհրդակցութեամբ՝ առ. 11—12 ժ.
ԲԺԻՇԿՆԵՐԸ
Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութիւն վեներական (սիֆիլիս) հիւանդութիւններ։
Վ. Ի. ՄԱՉՆԵՐ—9—10 ժ. միզային կազմի և կանանց հիւ.
Բ. Գ. ԱՂԱՍԱՐԵԱՆ—10 կէսից—12 կէս ժ. ներքին ջղային և երեխայոց հիւանդութիւն և ծաղկահատ։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11 կէսից—1 կէս ժ. մորթի, վիրաբուժութիւն և վեներական (սիֆիլիս) հիւ.
Մ. Վ. [illegible]—1—2 ժ. կանանց հիւ. և մանկաբարձութիւն.
Մ. Մ. [illegible]—12 և կէս—1 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւանդութիւններ։
[illegible]
Ն. Ա. [illegible]—[illegible] ժ. [illegible] վիրա[illegible]
Վճարը 1 ր. [illegible]
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան

„ՄՇԱԿԻ" ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ
Վաճառվում են հետեւեալ հրատարակութիւններից

1) Մուճունկարներ, Վրձինի I և II հատորներ	2 ր. 25 կ.
2) Մի ամիս Արեւելքում, Հ. Առաքելեանի	60 կ.
3) Հայկական տպագրութիւն, Լէօյի, հատոր I, երկրորդ տպագրութիւն	1 ր. 80 կ.
4) Դէպի Արարատ, Արշ. Մխիթարեանի	60 կ.
5) Արբեցողութեան դէմ	23 կ.
6) Ձեռնարկ տրամաբանութեան, հոգեբանութեան, բանահիւսութեան. Հ. Առաքելեանի	75 կ.
7) Յուշարձան ողբացեալ Արփիար Արփիարեանի	60 կ.
8) Մի հնչիւնի մը գիր (վիպագրութիւն), Ստ. Մալխասեանցի	30 կ.
9) Ընկերվարութիւն եւ հայ ընկերվարականներ, Մուշեղ եպիսկոպոսի	50 կ.
10) Ճորտերի ազատագրութեան յիսնամեակը, նկարներով	23 կ.
11) Անգլիայի հասարակական եւ քաղաքական կեանքը, թարգմ. Մ.-ի	23 կ.
12) Միլտոնի կեանքը և գրական գործունէութիւնը, Հ. Առաքելեանի	45 կ.
13) Գալիլէյի կեանքը և գիտական գործունէութիւնը, Հ. Առաքելեանի	40 կ.
14) Աստուածային հրահանգ հանրապետութեանց, Մակար եպ. Բարխուդարեանի	1 ր. 20 կ.
15) Գրիգոր Օտեան.	2 ր. 25 կ.
16) Խաղաղասիրական պատանեկական գիրք, Արթիւր Միւլլէրի, թարգմ. Իս. Յարութիւնեանի	60 կ.
17) Литургія Армяно-григоріанской церкви, Ս. քհ. Տէր-Յովհաննիսեանի	1 ր. 50 կ.
18) Отвѣтъ Архіепископа Мелхиседека Мурадьяна на посланіе Римскаго Папы Льва XIII	30 կ.
19) Թուբերկուլոզը, թոքախտ եւ հասարակութիւնը, բժ. Արտ. Շիլեանի	40 կ.
20) Туберкулезъ, Чахотка и Общество, բժ. Արտ. Շիլեանի	40 կ.
21) Հայ-վրացական յարաբերութիւնների պրոբլեմը, Բ. Իշխանեանի	30 կ.
22) Ռուսական վանքերը Ֆինլանդիայում, Գ. Տէր-Ռուբինեանցի	15 կ.
23) Ազգային երկու մեծութիւններ, Գ. Չթենցի	5 կ.
24) Հառաչանք, բանաստեղծ. հաւաքածու Վարդան Քամալեանի	45 կ.
25) Վիլհելմ եւ ուրիշ պատմուածքներ, Գէօթէ	23 կ.
27) Զգուանքներ, Դր. ա. ք. Մանդակունու	30 կ.

Վերադիր վճարով պատուէր չէ ընդունվում։ Ճանապարհածախսը պատուիրողի վրա։

լուրեր, ժխտումներ և անվերջ այլ և այլ տեղեկութիւններ։ Սակայն ոչ ոք ոչինչ որոշ բան ասել չէ կարողանում։

Մի բան կասկածից դուրս է. կենտրոնական ռադան, չը նայած ապրիլի 28-ի դէպքերին, գոյութիւն ունի։

Ռադայի սովորական գործունէութիւնը կարծես թէ չէր ընդհատվել և երէկ, ցերեկով, սկսվեցին ֆրակցիաների նիստերը։

Ժամը մօտ 3-ին ռադա էին վերադառնում պատգամաւորները, որոնք միջֆրակցիոնական նիստ գումարեցին։

Ռադայի պատգամաւորութեան այս նիստին հանդէս եկաւ Վ. Գոլուբովիչ մի զեկուցումով Կիեւում ստեղծված դրութեան մասին։ Երկար վիճաբանութիւններից յետոյ, ինչպէս հաղորդվեց մամուլի ներկայացուցիչներին պաշտօնապէս, վճռվեց ուղարկել պատգամաւորութիւն կենտրոնական ռադայից Կիեւի գերմանական դեսպանին՝ բարոն Մումմին։ Պատգամաւորութեան կազմն էր պ. պ. Գոլուբովիչ, Պորշ և Կովենկօ։ Պատգամաւորութեանը յանձնարարված էր իրազեկ անել բարոն Մումմին Կիեւի դէպքերի մասին, իմանալ նրանից, թէ այդ ամենը արդեօք տեղի է ունենում գերմանական իշխանութեան գիտութեամբ, պարզել, թէ ինչի՞ են ձգտում գերմանացիները։ Պատգամաւորութեան նաեւ յանձնարարված էր խնդրել բարոն Մումմին հեռագրով բանակցել Բերլինի հետ և տեղեկանալ գերմանական կառավարութեան, թէ եթէ գերմանական կառավարութիւնը ընդառաջ գնայ կենտրոնական ռադային, այն ժամանակ վերջինս էլ իր հերթին ընդառաջ կը գնայ նրան։

Պատգամաւորութիւնը ստացաւ խորհրդակցութիւնից դիրեկտիվներ՝ հարկ եղած դէպքում ցուցադրել, որ այժմեան մինիստրութիւնը հրաժարական է տալիս, որ նոր մինիստրութեանը կենտրոնական ռադան կը յանձնարարէ վերացնել հողային օրէնքը կեանքի պահանջներին յարմարեցնելու համար։

Փոքր ռադայի նիստը

Պատգամաւորութեան մեկնումից յետոյ սկսվեց փոքր ռադայի նիստը։ Նախագահում է Մ. Գրուշեւսկին, որը շատ շուտ թողնում հեռանում, և Ի. Ստեպանենկօն. ռադայի անդամներից քչերն են ներկայ։ Փոքրամասնութիւններից բաւական թուով կան, բացի ռուս. էս-էռներից. ուկրայն. էս-էռներից և էս-դէկներից քչերն են ներկայ։

Կառավարութեան աթոռների վրա գտնվում են՝ պօստի և հեռագրի մինիստր Սիդորենկօն, հրէական գործերի մինիստրի օգնական Խուրգին և լեհական գործերի մինիստրի օգնական Ռադզիեցկին։ Կառավարութեան միւս անդամները չը կան։

Մ. Գրուշեւսկու յայտարարութիւնը

Նիստը բացումից յետոյ Գրուշեւսկին անում է հետեւեալ յայտարարութիւնը. «Գիշերվայ ժամը 12 ին ինձ ներկայացաւ զինուորական կցորդ Շտոլցենբերգը և սկսեց հարց ու փորձ անել կենտրոնական ռադայի վերջին նիստի մանրամասնութիւնների մասին. Ես օգտվեցի այդ դէպքից և յայտարարեցի ամենախիստ բողոք գերմանական զօրքի արարքների դէմ կենտրոնական ռադայի շէնքում։ Ես դիմեցի զինուորական կցորդին հարցով, թէ ինչպէս բացատրել այդ։ Գ. Շտոլցենբերգը բացատրեց ինձ, որ բանկի դիրեկտոր Դօբրիի անյայտացման գործը քննութիւնը պարզել է, որ կառավարութեան անդամներից ոմանք մօտ են եղել այդ գործին. Վճռված էր բանտարկել նրանց. և որովհետեւ յայտնի էր, որ այդ անձինք գտնվում էին կենտրոնական ռադայի նիստում, այդ պատճառով էլ զինուորական իշխանութիւնները եկան ռադա։

«Այսօր ցերեկով ինձ մօտ եկաւ կորպուսի հրամանատարը, որին յանձնված է Դօբրիի գործի քննութիւնը. Նա յայտնեց, որ հրաման էր տրված բանտարկել այդ գործին մասնակից եղող մի քանի անձանց, սակայն այն եղանակը, ինչպէս այդ կատարվել է, նա չէ հաւանութիւն տալիս։ Այն հանգամանքը, որ զինուորները մտել են ժողովը, խուզարկել և թղթեր վերցրել, որոնց թւում և իմ թղթերը, այդ ամենը տրված յանձնարարութեան սահմաններից դուրս էր։ Բոլոր վերցված թղթերը կը վերադարձվեն։

«Ես յայտնեցի, որ այդ բոլոր բացատրութիւնները ես ընդունում եմ ի գիտութիւն, բայց նրանց համարում եմ անբաւարար պարլամենտի և նրա անդամների անձեռնմխելիութիւնը խախտելու համար»։

Պրօֆ. Գրուշեւսկու յայտարարութիւնը ռադայի անդամները լսեցին առանց ձայն հանելու։

Սահմանադրութեան նախագիծը

Այնուհետեւ կենտ. ռադայի փոխ-նախագահ Արկ. Ստեպանենկօ օրէնսդիր յանձնաժողովի անունից կարդում է Ուկրայնայի սահմանադրութեան նախագիծը։

Այդ օրինագիծը, կենտր. Ռադայի յանձնարարութեամբ, շատ կարճ կերպով մշակել է յանձնաժողովը։

Առաջին ընթերցումից յետոյ միաձայն ընդունվում է այդ նախագիծը, որի պաշտօնական վերնագիրը ասում է. «Ստատուտ Ուկրայնայի ժող. հանրապետութեան պետական կարգի, իրաւունքների և ազատութիւնների մասին»։

Առաջին ընթերցումից յետոյ տեղի է ունենում օրինագծի յօդուածային ընթերցումը. Սահմանադրութեան առանձին կէտերը ընդունվում են փոքրիկ խմբագրական ուղղումներով։

Միայն § 1-ի քուէարկութեան ժամանակ ձեռնպահ են մնում Բրիկ (ս.-դ. մենշեվիկ), Ռաֆես (Բունդ) և Պավլով (ս.-դ. մենշեվիկ)։

Այդ կէտը ասում է. «Վերականգնելով իր միահեծան իրաւունքը, իբրեւ ուկրայնական ժող. հանրապետութիւն, Ուկրայնան, իր երկիրը լաւագոյն կերպով պաշտպանելու համար և նրա ազատութիւնը, կուլտուրան և քաղաքացիների բարօրութիւնը ապահովելու և պաշտպանելու համար, իրան հռչակեց և այժմ է սուվերէն, ինքնօրէն և ոչ մէկից կախում չունեցող պետութիւն»։

Ռաֆես քուէարկութեանը չը մասնակցելու պատճառը բացատրում է այսպէս. «4 րդ հրովարտակի քուէարկութեան ժամանակ իրանք ձայն են տուել Ուկրայնայի անկախութեան դէմ. Այժմ չը կամենալով խախտել «Բունդի» և մենշեւիկների ֆրակցիայի միաձայն որոշումը՝ ձեռնպահ ենք մնում»։

Սահմանադրութեան հիմնական կէտերի էութիւնը յանգում է հետեւեալին.

Վերջացնելով «ստատուտի» քննութիւնը, ռադան, սպասելով գերմանական դեսպան բարոն Մումմի մօտ ուղարկած պատգամաւորութեան վերադարձին, անցաւ կենտ. ռադայի ձախ սոց. յեղ. անդամների գործի քննութեան, որոնք ձերբակալվել են ռադայի պատերի մէջ դեռ յունվարին, բոլշեւիկների առաջխաղացման ժամանակ։

Բայց այդ հարցի քննութիւնը ընդհատվեց, երբ բարոն Մումմի մօտից վերադարձան Գոլուբովիչ և Կովենկօ։

Պատգամաւորութեան երկրորդ անդամ Պորշը յայտնեց, թէ ինքը շուտով կենտ. ռադա կը գայ, բայց մինչև նիստի վերջը չեկաւ։

Պատգամաւորութեան առաքելութեան հետեւանքների մասին զեկուցում տուեց Գոլուբովիչ, ասելով որ դեսպանի հետ բանակցութիւնները վարել է գլխաւորապէս Պորշը։

Պատգամաւորութիւնը դեսպանին ծանօթացրել է Կիեւում տեղի ունեցող անցքերի հետ, յայտնել է նրան կենտ. ռադայի վճիռը նոր մինիստրութիւն ստեղծելու և տեղեկացրել է, որ կենտ. ռադան ամեն կերպ ընդառաջ կերթայ գերմանական իշխանութիւններին, եթէ գերմ. իշխանութիւնները իրանց կողմից ընդառաջ երթան կենտ. ռադային։

Դրան ի պատասխան գերմ. դեսպանը նկատել է, որ կենտ. ռադայի յայտարարութիւնները ուշացել են։ Դեսպանը, Գոլուբովիչի ասելով, շատ է խօսել նախկին սիրոյ և համակրանքի մասին, որով, կենտ. ռադան օգտվել է գերմ. իշխանութիւնից։ Բայց վերջինս, ընդգծել է դեսպանը, բազմիցս ցոյց է տուել թէ ռադային, թէ կառավարութեանը նրանց սխալները և նախազգուշացրել է, որ սօցիալիզացիա և միւս ռեֆորմներն անիրագործելի են. Այդ ցուցմունքները ուշադրութեան չեն առնվել, և կատարվեց այն, ինչ որ պիտի կատարվէր։

Պատգամաւորութիւնը միջֆրակցիական խորհրդակցութեան կողմից դեսպանին յայտնել է, որ կենտ. ռադան յայտարարում է, որ ինքը պատրաստ է նոր կաբինէտին յանձնել հողային օրէնքի վերաքննութիւնը, վերականգնելով մասնաւոր սեփականատիրութիւնը մանր հողատէրերի համար։

Բայց դրան էլ գերմ. դեսպանը պատասխանել է, որ այս բանը ուշացել է։

Յայտնում են, որ գիշերը մասնաւոր բնակարանում կայացել է կենտ. ռադայի անդամների նոր խորհրդակցութիւնը, որ տեղի ունեցած յեղաշրջման առիթով ընդունել է մի բանաձեւ։

Типографія «ЭКОНОМІЯ» Тифлисъ.